

**ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ  
ՆՐԱԳԻՐ  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության  
ուսումնառության  
ՀԱՅԵՏԱԿԱՐԳ  
(Նախագիծ)**

**ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների և ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Մայրենի լեզվի ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Հայոց լեզվի և գրականության ուսումնասիրությունը առաջարկվում է կառուցել հետևյալ **սկզբունքներով**.

**Ժողովրդավարական.** սովորողը մասնակցում է ուսումնառության պլանավորմանը և դրա իրականացման գործընթացին, նրա կարծիքի և հետաքրքրությունների հիման վրա են ծրագրվում նյութի բովանդակությունը, մշակվում ընթացիկ աշխատանքները:

**Անձնակենտրոն կամ սովորողակենտրոն** ուսումնառություն. սովորողն ինքնուրույն է, աշխատում է հիմնականում դասարանում՝ ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով: Ուսումնառության գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ:

**Տարբերակված ուսուցում.** ուսումնառության բովանդակությունը, կրթական միջավայրը, տրվող առաջադրանքները, չափորոշչային պահանջները ձևավորվում են՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, պահանջները, կարողունակությունները:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1. Լեզուն **մտածողության** միջոց է. հայոց լեզու ուսումնասիրելու ընթացքում պիտի զարգանան սովորողի քննադատաբար և պատկերավոր մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, անհանգստությունները ձևակերպելու և վերարտադրելու կարողությունը; Այսինքն՝ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության **հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է:**
2. Լեզուն **հաղորդակցման** միջոց է. հայոց լեզվի և գրականության ուսումնառությունը պիտի զարգացնի սովորողի՝ մարդկանց հետ տարբեր միջոցներով և եղանակներով (ժեստերի լեզու, ցուցադրում, ունկնդրում) հաղորդակցվելու, համագործակցելու, ցանկացած միջավայրում իրեն լիարժեքորեն դրսևորելու, բանակցելու, լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունները: **Բանավոր և գրավոր խոսքով հաղորդակցվելու կարողության զարգացումը** թե՛ սովորողի, թե՛ դասավանդողի հիմնական նպատակադրումն է:
3. Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու տեքստի **ենթիմաստը**, հեղինակի ասելքը, հերոսների արաքների դրդապատճառները, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները: Գրական հերոսների արաքների, բնավորության վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու, ճանաչելու ինքն իրեն և այլ մարդկանց, այս ամենի շնորհիվ սովորողը կկարողանա կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ: Տարբեր ոճերի տեքստերի մանրագնի ուսումնասիրումը կհանգեցնի գլխավոր նպատակադրման իրականացմանը, այն է՝ **բանավոր և գրավոր խոսքի առկայություն, մշտական զարգացում և կատարելագործում:**
4. Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնառությունը ամուր հիմք է ստեղծում **այլ առարկաներ** ուսումնասիրելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար:
5. Հայոց (մայրենի) լեզվի և գրականության ուսումնառությունը **սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի** ձևավորման և զարգացման է ուղղված: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության զարգացման նպատակ ունեն: Գրական-գեղարվեստական տեքստերի լեզվաոճական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:

Վերոնշյալ նպատակների իրականացման հիմնական ճանապարհներ են **լսել և դիտել, խոսել, կարդալ, գրել, ցուցադրել և այլն՝ նկատի ունենալով նաև ուսումնառության համընդհանուր ձևավորման մոդելը (UDL):**

**Լսել.** լսի և հասկանալ փոխանցվող տեղեկույթը, քննողաբար վերաբերվի իր և ուրիշների ելթադրություններին, ակտիվորեն լսի և հարգաբով վերաբերվի այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին:

**Խոսել.** հաղորդակցման տարբեր միջոցներով (ժեստերի լեզու, նկար) մասնակցի երկխոսության, պատմի տեսածի, լսածի, կարդացածի բովանդակությունը, նկարագրի տարաբնույթ երևույթների փոխակապակցվածությունը, արտահայտի, հիմնավորի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, մեկնաբանի և վերլուծի իր զգացմունքները, ցանկությունները, կարիքները: Հանդես գա մենախոսությամբ, լսարանին ներկայացնի իր տեսակետը՝ հիմնավորելով փաստերով և տվյալներով:

**Կարդալ.** հասկանալով կարդա տարբեր ոճերի տեքստեր, հայերենի ուղղախոսությանը հատուկ ճիշտ արտասանությամբ և հնչերանգով հաղորդի կարդացածի իմաստը, տրամադրությունը:

**Գրել.** գրի առնի լսած, կարդացած խոսքից հիմնական միտքը, դուր եկած հատվածը, վերարտադրի և նորովի շարադրի լսածը, կարդացածը, տեսածը. բառերով ձևակերպի և հնարավորինս ճշգրիտ վերարտադրի սեփական երևակայության մեջ ստեղծված պատկերները: Հորինի, ստեղծի գրավոր պատկերավոր խոսք:

**Ցուցադրել.** կարողանա պատրաստած նյութը ներկայացնել նկարներով, աղյուսակներով, սահիկաշարով, մեդիայի տարբեր միջոցներով, կատարի համապատասխան գրառումներ, ինչպես հնչյունային խոսքով, այնպես էլ ժեստերի լեզվով պատմի իր հետազոտության մասին:

**Հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսումնառությունը բաժանվել են հետևյալ փուլերի.**

1. *Մայրենի լեզու* (իբրև մեկ միասնացած առարկա) – 1-6-րդ դասարաններ. ներառում է ընդհանրական, վերառարկայական և միջառարկայական թեմաներ, գրական և ոչ գրական տեքստեր, դրանց տրամաբանության, գեղագիտական կառուցվածքի, պատկերավորման միջոցների ուսումնասիրում:
2. *Հայոց լեզու* (իբրև մեկ առարկա) 7-12-րդ դասարաններ. ներառում է հայոց լեզվի լեզվաբերականական, ոճաբանական համակարգի միայն գործնական նշանակություն ունեցող թեմաները, որոնց ուսումնառությունը կօժանդակի աշակերտի լեզվամտածողության, բանավոր և գրավոր խոսք կազմելու, հաղորդակցական կարողությունների զարգացմանը:
3. *Գրականություն* (իբրև մեկ առարկա) 7-12-րդ դասարաններ. ներառում է հայ դասական, ժամանակակից և արտասահմանյան գրականության լավագույն նմուշները, որոնց ուսումնառությունը հիմնականում տեքստի կառուցվածքի, տրամաբանության, գեղագիտության ուսումնասիրում է, որը կօգնի զարգացնելու սովորողի երևակայությունը, պատկերավոր և քննադատական մտածողությունը, ստեղծարարությունը, բանավոր և գրավոր խոսք կազմելու կարողությունը:
4. Կրթարաններն իրենց ընտրությամբ կարող են ունենալ նաև հատուկ դասաժամեր *խոսքի մշակույթից, հռետորական արվեստից (ճարտասանությունից), դրամատուրգիայից* և այլն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ԿԱՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՄՆԵՐ**

Հայոց լեզվի (մայրենի) և գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների, պահանջների, սահմանված կարողունակությունների հիման վրա մշակված վերջնարդյունքներով սահմանվել են **հիմնական և ենթահասկացություններ**, որոնց համապատասխան, ինչպես նաև տարիքային ամեն խմբի համար սահմանված են 4-5 կետով չափորոշչային հստակ պահանջներ կամ չափանիշներ: Ամեն հասկացությանը համապատասխան սահմանված չափանիշները սովորողի կարողունակությունների ձեռքբերման գնահատման հիմքն է: Այսինքն՝ ուսուցիչը միավորային գնահատման սանդղակները կազմելու է՝ առաջնորդվելով ամեն դասարանի համար սահմանված վերջնարդյունքներով:

Հարկ է նկատել, որ արդի դարաշրջանում **երկչափ** կրթությունից՝ **գիտելիք - կարողություն կամ հմտություն**, անցում է կատարվել **եռաչափ** կրթության՝ **հասկացություն – գիտելիք – կարողություն/հմտություն**: Այդ է պատճառը, որ հայոց լեզվի և գրականության վերջնարդյունքները սահմանվել են որոշակի հասկացությունների և ենթահասկացությունների տիրույթներում:

1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսումնառության համար սահմանված են հետևյալ **հիմնական հասկացությունները՝**

- Հաղորդակցում**
- Ընթերցանություն/գրականություն**
- Լեզվական համակարգ**
- Ստեղծարարություն**
- Ինքնություն**

Ամեն հիմնական հասկացություն ունի իր ենթահասկացությունները, որոնք որոշ տարբերություններ ունեն՝ պայմանավորված առարկայի յուրահատկություններով և ուսումնասիրության պահանջներով, ինչպես նաև սովորողների տարիքային առանձնահատկություններով:

7-12 դասարանների **հայոց լեզվի** ուսումնառության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

- Հաղորդակցում՝ բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում.**
- Լեզվական համակարգ՝ հայերենի հնչյունական, բառակազմական, քերականական համակարգեր.**
- Ստեղծարարություն՝ տեքստի փոփոխում և ստեղծում, նախագիծ**
- Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում:**

Վերջնարդյունքները ներկայացված են աղյուսակով, տարիքային բոլոր խմբերի, այսինքն՝ բոլոր դասարանների համար սահմանված են վերջնարդյունքները կամ չափանիշները, որոնք 4-5-ն են, սահմանված են հստակ և չափելի: Այնպես որ ուսուցչի համար տեսանելի և մատչելի կլինի օգտվել դրանցից և կազմել գնահատման սանդղակներ՝ սովորողների՝ վերջնարդյունքներին համապատասխան ձեռքբերումները գնահատելու համար: Հիմնական հասկացություններից **ինքնությունը՝ վերաբերմունք և արժևորում** ենթահասկացություններով, միավորային գնահատում չի ենթադրում:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

Հայոց լեզվի և գրականության ծրագրերում ընդգրկված նյութը համապատասխանում է տարիքային տվյալ խմբի առջև դրված նպատակներին և խնդիրներին, այսինքն՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին ամբողջությամբ:

Նկատի ունենալով սովորողների տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրության շրջանակը և պահանջմունքները՝ նախատեսվում են նյութերի ընտրության հետևյալ շրջանակը՝

- տարրական դպրոց. 6-9 տարեկան աշակերտների հետաքրքրության շրջանակը պատվում է մեզ շրջապատող բնության, կենդանական և բուսական աշխարհների շուրջ. հետևաբար տեքստերը, ընթերցանության նյութերը հիմնականում պիտի ներկայացնեն երեխային շրջապատող կենդանական և բուսական աշխարհը:
- միջին դպրոցի առաջին աստիճան. 10-13 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը ժողովրդական գրույցները, լեգենդները, առասպելները, դյուցազներգություններն են, այսինքն՝ առասպելական աշխարհն է. հետևաբար 5-6-րդ դասարաններում տեքստերը հիմնականում բանահյուսական նյութեր և դրանց հեղինակային մշակումներ են:
- միջին դպրոցի երկրորդ աստիճան. 13-15 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը կազմում են կենսագրական, հերոսական բնույթի պատմությունները, այդ պատճառով էլ տարիքային այս խմբի համար պիտի ընտրվեն նշանավոր մարդկանց կենսագրականներ, հերոսական պատմություններ:
- ավագ դպրոցի կամ 15-17 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը սեփական ես-ի շուրջ է պատվում. տեքստերը պիտի համապատասխանեն նրա անձնական հետաքրքրությունները բավարարելուն, մասնագիտական կողմնորոշման հարցերը լուծելուն:

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԾՐԱԳՐԵՐ**

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ**

**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ**

1-12-րդ դասարաններում հայոց (մայրենի) լեզվի և գրականության ծրագրերը ներկայացված են աղյուսակների տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները

4. Վերջնարդյունքները
4. Բովանդակությունը
5. Առաջարկվող գործունեության ձևերը
6. Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները
7. Միջառարկայական կապերը
8. Կապը Հանրակրթության պետական չափորոշի վերջնարդյունքների հետ

Յուրաքանչյուր դասարանում ուսումնառելու համար հայոց լեզվից առանձնացվել են որոշակի *թեմաներ (1)*, որոնք համապատասխանում են տարիքային տվյալ խմբի հետաքրքրություններին, առանձնահատկություններին և պահանջներին:

Նախ նշվում են *դասարանը*, տվյալ դասարանում հայոց կամ մայրենի լեզվի և գրականության ընդհանրական *ժամաքանակը (1)* ուսումնական տարվա համար, ապա՝ *թեմայի վերնագիրը (1)*, տվյալ թեմային տրամադրվող մոտավոր *ժամաքանակը*: Հաջորդող հորիզոնական սյունակներում նշվում են թեմայի ուսումնառության *նպատակները (2)*, ապա ակնկալվող *վերջնարդյունքները (3)*, այսինքն՝ տվյալ թեմայի ուսումնասիրության ավարտին ինչ պիտի իմանա և կարողանա աշակերտը: Հիմնական շեշտադրումը սովորողի կարողունակությունների, բանավոր և գրավոր խոսք կազմելու հմտության զարգացումն է:

**Հայոց լեզվի ուսումնառությունը 7-12-րդ դասարաններում:** Հանրակրթական դպրոցի հիմնական ծրագրի 7-9-րդ դասարաններում ուսումնասիրվում է հայոց լեզվի քերականությունը՝ ձևաբանություն և շարահյուսություն բաժիններով՝ շեշտադրելով քերականական երևույթների կիրառությունը խոսքի մեջ և դրանց ոճական արժեքը: Ուսումնական գործունեությունը հայոց լեզվից հիմնականում գործնական բնույթ ունի, կապված է աշակերտի կյանքի, տրամաբանության, քննադատական մտածողության, լեզվամտածողության զարգացման հետ, կազմակերպվում է միտք շարժող հարցադրումների հիման վրա: Առաջնային նպատակադրումը ոչ թե կանոնները սերտելն է, այլ ինքնուրույն, կամային գործունեության մղող քայլերով կանոնը բացահայտելը, այսինքն՝ լեզվաբանության օրենքները սեփական փորձով փաստարկելը:

7-րդ դասարանում ուսումնասիրվում է «Ձևաբանություն» բաժինը, իսկ «Շարահյուսության» ուսուցումը սկսվում է 8-րդ դասարանից: Ծրագրային նյութի ուսուցման ընթացքում հաջորդական քայլերով կյանքի է կոչում հիմնական նպատակը՝ պատրաստել գրագետ հաղորդակցվող, տրամաբանված բանավոր ու գրավոր խոսք ունեցող անհատ, որն իր սեփական ջանքերով հասնում և բացահայտում է գիտելիքը: Հայոց լեզվի ծրագրային նյութի ուսուցմանը զուգընթաց կարևորվում է հանրակրթության պետական չափորոշով նախանշված կարողունակությունների զարգացման համադրումը:

9-րդ դասարանը հիմնական դպրոցի վերջին փուլն է, որտեղ գործնականորեն առավել խորանում և ընդլայնվում է հայոց լեզվի ուսումնառությունը:

Միայն դասագրքերի առաջադրանքներով անհնարին է գիտելիքը վերածել կարողության, առավելապես՝ հմտության: Ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր դասի համար ունենալ լրացուցիչ ուսումնական նյութեր, որոնք լինելու են հետաքրքրաշարժ, նպաստելու են սովորողների լեզվամտածողության և քննադատական մտածողության զարգացմանը: Գործնական աշխատանքներն առավելապես ստեղծվում են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հիմնական դպրոցն այն կարևորագույն օղակն է, որտեղ սովորողը հայոց լեզվից ձեռք է բերում հիմնարար գործնական *գիտելիքներ*, որոնք անհրաժեշտ են լինելու նրան ինչպես ավագ դպրոցում ուսանելու, այլ նաև ողջ կյանքի ընթացքում, քանի որ քերականության ուսումնասիրությունը միջոց է գրագետ կապակցված խոսք կազմելու համար:

**Ավագ դպրոցը** հիմնականում համադրման, կշռադատման, պատճառահետևանքային կապերը հիմնավորելու փուլն է: 10-12-րդ դասարաններում հայոց լեզվի ուսումնառությունը եռաչափ է, եթե ծավալայնությունն ապահովվել է տարրական և հիմնական դպրոցներում, ապա բարձրությունն ու խորությունը առաջին պլան են մղվում:

Հիմնական դպրոցում անցած նյութի նպատակային և պարույրաձև կրկնություն միջոցով ավագ դպրոցում շեշտը հիմնականում դրվում է **ոճագիտության**՝ որպես խոսքի դրսևորման եղանակների ու ձևերի համակողմանի ուսումնասիրության վրա, որը սովորողին հնարավորություն կտա կառուցելու ամբողջական և ինքնուրույն խոսք՝ լեզվաքերականական միավորների գրագետ համադրմամբ, հայոց լեզվի ոճական առանձնահատկությունների տեղին կիրառմամբ:

Ավագ դպրոցում նախատեսվում է վերլուծական շարադրության, էսսեի, գիտական աշխատանքի, գործնական գրությունների դասավանդում, իսկ վերառարկայական հմտություններն ամրապնդելու և զարգացնելու համար՝ նախագծային և հետազոտական աշխատանքի իրականացում, որն սկսվում է դեռևս ավելի ցածր դասարաններում, սակայն առավել համապարփակ և հետևողական է դառնում ավագ դպրոցում: Այս աստիճանում հայոց լեզվի դասավանդումը հիմնականում իրականացվում է մոդուլների միջոցով, շեշտադրվում է աշակերտի ինքնուրույն ուսումնառությունը:

**Առաջարկվող գործունեության ձևեր (5)** բաժնում ներկայացված են դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կատարելիք գործը: Այս բաժինը կառուցված է պարզից բարդը գնալու սկզբունքով և հիմնականում հենվում է ամերիկացի մանակավարժ և հոգեբան Բենջամին Բլումի աստիճանակարգով սահմանված բայերով գործողության քայլաշարի վրա: Այս սկզբունքով աշխատելու դեպքում ապահովվում է տարբերակված ուսուցումը, ինչպես նաև աշակերտի գործունեության բազմազանությունը նույն թեմայի շրջանակում:

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ (6) բաժնում** առանձնացվել են ութ հասկացություններ, որոնցից 2-3-ը կարող են կիրառվել տվյալ թեմայի ուսումնառության շրջանակում: Դրանք ապահովում են հայոց լեզվից և գրականությունից ուսուցանվող թեմայի կապը այլ առարկաների հետ: Առանձնացվալ են հետևյալ հասկացությունները՝

1. Օրինաչափություն
2. Պատճառ և հետևանք
3. Կառուցվածք և գործառույթ
4. Կայունություն և փոփոխություն
5. Անհատներ և հարաբերություններ
6. Ժամանակ և տարածություն
7. Անհատական և մշակութային արժեհամակարգ
8. Փոփոխություն և զարգացում

**Հայոց լեզվի ուսումնառության վերջնարդյունքներ  
7-12-րդ դասարան**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

**7-9-րդ դասարաններ**

		ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ		
ՀԱՍԿԱՑՈՒԹ ՅՈՒՆ	ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	7-րդ դասարան	8-րդ դասարան	9-րդ դասարան

<b>ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	<b>Բանավոր հաղորդակցում</b>	1. Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթների, առարկաներ, դեպքեր, իրադարձություններ:	1. Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, դեպքեր, իրադարձություններ:	1. Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, դեպքեր, իրադարձություններ:
		2. Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի դրանց, մեկնաբանի, փոխան ցի զգացողություններ, ակնհայտ գաղափար:	2. Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի դրանց, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, թաքնված գաղափար:	2. Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի դրանց, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, թաքնված գաղափար, վեր հանի ենթատեքստը:
		3. Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:	3. Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:	3. Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:
		4. Կարծիք հայտնի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորի այն:	4. Կարծիք հայտնի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորի այն:	4. Կարծիք հայտնի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորի այն:
	<b>Գրավոր հաղորդակցում</b>	1. Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն) կանոնները:	1. Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն) կանոնները:	1. Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն) կանոնները:
		2. Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճառահետևանքային կապերը:	2. Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճառահետևանքային կապերը:	2. Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճառահետևանքային կապերը:
		3. Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:	3. Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:	3. Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:
		4. Վերաշարադրի, փոխադրի, հաղորդակցվի նաև ժամանակի և տարածության մեջ էլեկտրոնային տեքստեր/:	4. Վերաշարադրի, փոխադրի, համառոտի և ընդարձակի տրված տեքստը, հաղորդակցվի նաև ժամանակի և տարածության մեջ /էլեկտրոնային տեքստեր/:	4. Վերաշարադրի, փոխադրի, հոմանիշային զույգեր կիրառի, հաղորդակցվի նաև ժամանակի և տարածության մեջ/էլեկտրոնային տեքստեր/:
	<b>Ոչ բառային հաղորդակցում</b>	1. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:	1. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:	1. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:
		2. Կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևեր:	2. Կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևեր:	2. Արդյունավետ կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևեր:
		3. Կազմի, բացատրի և ցուցադրի գրաֆիկներ, աղյուսակներ:	3. Կազմի, բացատրի և ներկայացնի գրաֆիկներ, աղյուսակներ, տրամագրեր:	3. Կազմի, բացատրի և ներկայացնի գրաֆիկներ, աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:

<b>ԼԵԶԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>Հնչյունաբանական գիտելիքներ և կիրառում</b>	1. Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:	1. Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:	1. Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:
		2. Գրի ուղղագրական կանոններին համապատասխան:	2. Գրի ուղղագրական կանոններին համապատասխան:	2. Գրի ուղղագրական կանոններին համապատասխան:
		3. Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան:	3. Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան:	3. Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան:
	<b>Բառագիտական գիտելիքներ և կիրառում</b>	1. Ճանաչի և գործածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:	1. Ճանաչի և գործածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:	1. Ճանաչի և գործածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:
		2. Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակներ (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:	2. Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակներ (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:	2. Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակներ (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:
		3. Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, հոմանշային):	3. Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, հոմանշային):	3. Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, ստուգաբանական, հոմանշային):
	<b>Քերականական գիտելիքներ և կիրառում</b>	1. Ճանաչի գոյականի, ածականի, թվականի, դերանվան, բայի քերականական հատկանիշները, տարբերակի և կիրառի խոսքում:	1. Ճանաչի մակբայի, կապի, վերաբերականի, ձայնարկության քերականական հատկանիշները, տարբերակի և ճիշտ կիրառի խոսքում:	1. Ճանաչի շաղկապի քերականական հատկանիշները, տեսակները, տարբերակի տեսակները և ճիշտ կիրառի խոսքում:
		2. Ձևափոխի (հոլով, հոդ, թիվ, խոնարհում) խոսքի մասերը կանոններին համապատասխան և ըստ անհրաժեշտության և ճիշտ ձևափոխություններով կիրառի խոսքում:	2. Կազմի բառակապակցություններ և տարբեր տեսակի պարզ նախադասություններ (լիակազմ և միակազմ):	2. Ճանաչի նախադասության ստրուկտուրայի կապակցման միջոցները:
		3. Իմանա կետադրական որոշ կանոններ և կետադրի տարաբնույթ տեքստեր:	3. Ճանաչի նախադասության գլխավոր և երկրորդական անդամները և ճիշտ կիրառի խոսքում:	3. Տարբերի բարդ նախադասության տեսակները (համադասական և ստորադասական), նրանց կազմության եղանակները և ճիշտ կիրառի խոսքում:
		4. Կատարի ձևաբանական վերլուծություն և կազմի գրագետ խոսք:	4. Իմանա կետադրական կանոնները և կետադրի տարաբնույթ տեքստեր՝ ըստ իմաստային նրբերանգների:	4. Իմանա ուրիշի խոսքի կազմությունը, վերաժումը անուղղակիի, կետադրական կանոնները և կետադրի տարաբնույթ տեքստեր՝ ըստ իմաստային նրբերանգների:
	<b>Ոճաբանական գիտելիքներ և կիրառում</b>	1. Տարբերի ոճերը, տեղադրի կամ փոփոխի համապատասխան բառապաշար:	2. Տարբերի ոճերը, տեղադրի կամ փոփոխի համապատասխան բառապաշար:	1. Տարբերի ոճերը: 2. Կազմի խոսք՝ ըստ իրադրության: 3. Տեղադրի կամ փոփոխի համապատասխան բառապաշար:
<b>ՍՏԵՂՃԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ</b>	<b>Տեքստի ստեղծում և փոփոխում</b>	1. Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:	1. Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:	1. Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:

		<p>2. Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք /առանձին և խմբային/, արձակ և չափածո պատմութիւններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ /կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն/:</p>	<p>2. Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք/ առանձին և խմբային/, արձակ և չափածո պատմութիւններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ /կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն/:</p>	<p>2. Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք / առանձին և խմբային/, արձակ և չափածո պատմութիւններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ /կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն/:</p>
		<p>3. Սկսի, շարունակի և ավարտի պատմութիւնը, զարգացնի այն՝ շարունակելով ներսից կամ վերջից:</p>	<p>3. Սկսի, շարունակի և ավարտի պատմութիւնը, զարգացնի այն՝ շարունակելով ներսից կամ վերջից:</p>	<p>3. Սկսի, շարունակի և ավարտի պատմութիւնը, զարգացնի այն՝ շարունակելով ներսից կամ վերջից:</p>
		<p>4. Ստեղծի տարաբնույթ ուսումնական/ ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ /և այլն:</p>	<p>4. Ստեղծի տարաբնույթ ուսումնական/ ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ /և այլն:</p>	<p>4. Ստեղծի տարաբնույթ ուսումնական/ ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ /և այլն:</p>
	<b>Նախագիծ</b>	<p>1.Ձևակերպի հետազոտական հարց դրույթի վերաբերյալ:</p>	<p>1.Ձևակերպի հետազոտական հարց դրույթի վերաբերյալ:</p>	<p>1.Ձևակերպի հետազոտական հարց դրույթի վերաբերյալ:</p>
		<p>2.Հավաքի փաստեր, պլանավորի քայլաշար,</p>	<p>2.Հավաքի փաստեր, պլանավորի քայլաշար:</p>	<p>2. Հավաքի փաստեր, պլանավորի քայլաշար:</p>
		<p>3. Տեղեկությունները ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:</p>	<p>3.Տեղեկությունները ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:</p>	<p>3. Տեղեկությունները ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:</p>
				4,
		<p>4.Ցուցադրի միջառար կայան կապերը, փաստարկի օրինակներով և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:</p>	<p>4. Ցուցադրի միջառար կայան կապերը, փաստարկի օրինակներով և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:</p>	<p>4.Ցուցադրի միջառար կայան կապերը, փաստարկի օրինակներով և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ անիմացիա, ներկայացում:</p>
<b>ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>Վերաբերմունք</b>	<p>1. Համագործակցի ընկերների հետ՝ պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:</p> <p>2. Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</p> <p>3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:</p> <p>4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:</p>	<p>1. Համագործակցի ընկերների հետ՝ պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:</p> <p>2. Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</p> <p>3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:</p> <p>4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:</p>	<p>1. Համագործակցի ընկերների հետ՝ պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:</p> <p>2. Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</p> <p>3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:</p> <p>4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:</p>
	<b>Արժևորում</b>	<p>1. Արժևորի մայրենի լեզվի դերը հասկանալի դառնալու և մտքերը տեղ հասցնելու գործում:</p>	<p>1. Արժևորի մայրենի լեզվի դերը հասկանալի դառնալու և մտքերը տեղ հասցնելու գործում:</p>	<p>1. Արժևորի մայրենի լեզվի դերը հասկանալի դառնալու և մտքերը տեղ հասցնելու գործում:</p>

		<p>2. Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:</p> <p>3. Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:</p> <p>4. Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի բառակազմական հնարավորություններն ու քերականական ճկունությունը թարգմանական գրականության մեջ:</p>	<p>2.Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:</p> <p>3. Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:</p> <p>4. Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի բառակազմական հնարավորություններն ու քերականական ճկունությունը թարգմանական գրականության մեջ:</p>	<p>2.Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:</p> <p>3.Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:</p> <p>4.Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի բառակազմական հնարավորություններն ու քերականական ճկունությունը թարգմանական գրականության մեջ:</p>
--	--	--	---	---

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՌԻՍԻՄԱՌՈՒԹՅԱՆ ԿԵՐՋԱՐԴՅՈՒՆՔԵՐ**  
**ԱՎԱԳ ԴՊՐՈՑ. 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ**

<b>ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>ԵՆԹԱՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>10-րդ դասարան</b>	<b>11-րդ դասարան</b>	<b>12-րդ դասարան</b>
<b>ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ</b>	<b>Բանավոր հաղորդակցում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Պատմի տեսածի, լսածի և զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթների, առարկաներ, վերլուծի դեպքեր և իրադարձություններ:</li> <li>Ընթերցի տեքստը պահանջ վող հնչեցնելով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի դրանց, մեկնա բանի, փոխանցի զգացողություններ, հիմնական գաղա փարը, խոսքի գեղագիտությունը:</li> <li>Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:</li> <li>Կարծիք հայտնի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորի դրանք:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Պատմի տեսածի, լսածի և զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթների, առարկաներ, վերլուծի դեպքեր և իրադարձություններ:</li> <li>Ընթերցի տեքստը պահանջ վող հնչեցնելով, վերարտադրի, կատարի ճիշտ և տեղին հարցադրումներ, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, հիմնական գաղափարը, խոսքի գեղագիտությունը:</li> <li>Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:</li> <li>Կարծիք հայտնի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորի դրանք:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Պատմի տեսածի, լսածի և զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթների, առարկաներ, վերլուծի դեպքեր և իրադարձություններ:</li> <li>Ընթերցի տեքստը պահանջ վող հնչեցնելով, վերարտադրի, կատարի ճիշտ և տեղին հարցադրումներ, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, հիմնական գաղափարը, խոսքի գեղագիտությունը:</li> <li>Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:</li> <li>Կարծիք հայտնի, պաշտպանի սեփական տեսակետն ու դիրքորոշումը, հիմնավորի դրանք:</li> </ol>
	<b>Գրավոր հաղորդակցում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն, քերականական և ոճական նորմեր) կանոնները:</li> <li>Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճառա հետևանքային կապերը:</li> <li>Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:</li> <li>Վերաշարադրի, փոխադրի լսածը, կարդացածը, դիտածը՝ կիրառելով համապատասխան լեզվական միջոցներ, ցուցաբերելով համապատասխան մեղիա գրագիտություն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն, քերականական և ոճական նորմեր) կանոնները:</li> <li>Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճառա հետևանքային կապերը:</li> <li>Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:</li> <li>Վերաշարադրի, փոխադրի լսածը, կարդացածը, դիտածը՝ կիրառելով համապատասխան լեզվական միջոցներ, ցուցաբերելով համապատասխան մեղիա գրագիտություն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն, քերականական և ոճական նորմեր) կանոնները:</li> <li>Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճառա հետևանքային կապերը:</li> <li>Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:</li> <li>Վերաշարադրի, փոխադրի լսածը, կարդացածը, դիտածը՝ կիրառելով համապատասխան լեզվական միջոցներ, ցուցաբերելով համապատասխան մեղիա գրագիտություն:</li> </ol>



	<b>Ոչ բառային հաղորդակցում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:</li> <li>Կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևերը:</li> <li>Կազմի, բացատրի և ներկայացնի գրաֆիկներ, աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:</li> <li>Արդյունավետորեն կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևերը:</li> <li>Կազմի, բացատրի և ներկայացնի գրաֆիկներ, աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:</li> <li>Արդյունավետորեն կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևերը:</li> <li>Կազմի, բացատրի և ներկայացնի գրաֆիկներ, աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:</li> </ol>
<b>ԼԵԶԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ</b>	<b>Հնչյունաբանական գիտելիքներ և կիրառում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:</li> <li>Գրի ուղղագրական կանոններին համապատասխան:</li> <li>Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:</li> <li>Գրի ուղղագրական կանոններին համապատասխան:</li> <li>Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:</li> <li>Գրի ուղղագրական կանոններին համապատասխան:</li> <li>Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան:</li> </ol>
	<b>Բառագիտական գիտելիքներ և կիրառում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Գործածի մեկիմաստ և բազմիմաստ բառեր, դրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:</li> <li>Հասկանա և կիրառի բառապաշարի հարստացման բառակազմական եղանակները՝ ածանցում, բառաբարդում, հապավում:</li> <li>Իմանա բառարանների տեսակները, օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, հոմանշային):</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Գործածի մեկիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:</li> <li>Հասկանա և կիրառի բառապաշարի հարստացման բառակազմական եղանակները՝ ածանցում, բառաբարդում, հապավում:</li> <li>Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, հոմանշային):</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Գործածի մեկիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները:</li> <li>Հասկանա և կիրառի բառապաշարի հարստացման բառակազմական եղանակները՝ ածանցում, բառաբարդում, հապավում:</li> <li>Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, հոմանշային):</li> </ol>
	<b>Քերականական գիտելիքներ և կիրառում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Իմանա կետադրական կանոնները և կետադրի տարբեր բարդության տեքստեր՝ ըստ կանոնների և իմաստային նրբերանգների:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Կետադրի տարբեր բարդության տեքստեր՝ ըստ քերականական կանոնների և իմաստային նրբերանգների:</li> <li>Տարբերակի խոսքի մասերը և ձևափոխի բառերը քերականական կանոններին համապատասխան, կիրառի խոսքում:</li> <li>Տարբերակի և կիրառի քերականական (ձևաբանական և շարահյուսական) հոմանիշները, խոսքի մեջ փոխարինի մեկը մյուսով:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Կետադրի տարբեր բարդության տեքստեր՝ ըստ քերականական կանոնների և իմաստային նրբերանգների:</li> <li>Ձևափոխի բառերը քերականական կանոններին համապատասխան, կիրառի խոսքում:</li> <li>Կիրառի քերականական (ձևաբանական և շարահյուսական) հոմանիշները, խոսքի մեջ փոխարինի մեկը մյուսով:</li> </ol>
	<b>Ոճաբանական գիտելիքներ և կիրառում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Իմանա և տարբերակի բառապաշարի շերտերը՝ ըստ ոճաբանական առանձնահատկությունների:</li> <li>Ճանաչի բառերի ձևափաստային տեսակները, դարձված քերական, կիրառի համապատասխան խոսքային միջավայրում:</li> <li>Ճանաչի և տարբերի գործառնական ոճերը (առօրյա-խոսակցական, հրապարակախոսական): Կազմի առօրյա-խոսակցական և հրապարակախոսական տեքստեր:</li> <li>Իմանա և կիրառի գործնական գրություն կազմելու ձևերը:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Կիրառի բառապաշարի շերտերը (ըստ ոճաբանական առանձնահատկությունների), բառերի ձևափաստային տեսակները և դարձվածքները համապատասխան խոսքային միջավայրում:</li> <li>Ճանաչի և տարբերի գործառնական ոճերը (գեղարվեստական, վարչական): Կազմի գրական տեքստ պատկերավորման և արտահայտչական տարբեր միջոցներով:</li> <li>Ճանաչի և տարբերի գործառնական ոճերը (առօրյա-խոսակցական, հրապարակախոսական): Կազմի առօրյա-խոսակցական և հրապարակախոսական տեքստեր:</li> <li>Իմանա և կիրառի գործնական գրություն կազմելու ձևերը (կառուցվածք, բառապաշար, գործառնական):</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Կիրառի բառապաշարի շերտերը (ըստ ոճաբանական առանձնահատկությունների), բառերի ձևափաստային տեսակները և դարձվածքները համապատասխան խոսքային միջավայրում:</li> <li>Ճանաչի և տարբերի գործառնական ոճերից գիտական և խոսքի (գրողի, իրադրական, անհատական) ոճերը և դրանց առանձնահատկությունները: Կազմի գիտական տեքստ:</li> <li>Իմանա և կիրառի ոճի հատկությունները տվյալ իրավիճակին համապատասխան լեզվական միջոցներով (սեղմություն, պարզություն և այլն):</li> <li>Իմանա և կիրառի գործնական գրություն կազմելու ձևերը (կառուցվածք, բառապաշար, գործառնական):</li> </ol>

		(կառուցվածքը, բառապաշարը, գործածության ոլորտը). կազմի տարաբնույթ գործնական գրություններ (դի մում, բացատրագիր, ինքնակենսագրություն, նամակ, էլեկտրոնային նամակ):	բառապաշարը, գործածության ոլորտը). կազմի տարաբնույթ գործնական գրություններ (տեղեկանք, ստացական, լիազորագիր, երաշխավորագիր, CV):	ծության ոլորտը). կազմի տարաբնույթ գործնական գրություններ (արձանագրություն, քաղվածք, պաշտոնական նամակ, հիմնավորող նամակ):
	<b>Հայոց լեզվի պատմություն. Քերականություն, ոճագիտություն</b>	<ol style="list-style-type: none"> <li>Պատկերացում կազմի լեզուների գեղակցության մասին. խմբավորի լեզուներն ըստ ծագման:</li> <li>Իմանա և նկարագրի հայոց լեզվի զարգացման փուլերը: Համեմատի և նշի լեզվի զարգացման փուլերի որոշ առանձնահատկություններ:</li> <li>Ճանաչի գրաբարի լեզվական որոշ առանձնահատկություններ, կատարի պարզ փոխադրումներ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Ճանաչի միջին հայերենի լեզվական որոշ առանձնահատկություններ, կատարի պարզ փոխադրումներ:</li> <li>Իմանա և նկարագրի հայոց լեզվի գրական երկու՝ արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակները, նշի լեզվական առանձնահատկությունները: Կատարի փոխադրումներ:</li> <li>Պատկերացում կազմի հայերենի բարբառների մասին:</li> <li>Կատարի նախադասության ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Գրի վերլուծական շարադրություն (գրական երկի, գրողի գեղարվեստական ժառանգության, գրողի ոճի, գրական կերպարի բնութագրման):</li> <li>Ստեղծի տարբեր և խառը ոճերով տեքստեր:</li> </ol>
<b>ՄՏԵՂԵՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>Տեքստի ստեղծում և փոփոխում</b>	<ol style="list-style-type: none"> <li>Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:</li> <li>Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք (առանձին և խմբային), արձակ և չափածո պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ (կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն):</li> <li>Սկսի, շարունակի և ավարտի պատմությունը, զարգացնի այն՝ շարունակելով ներսից կամ վերջից:</li> <li>Ըստ թեմայի՝ ստեղծի տարաբնույթ ուսումնական նյութեր՝ պաստառ, գրքույկ, սահիկաշար, տեղեկատու և այլն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:</li> <li>Ըմբռնի տեքստի կառուցվածքը: Հասկանա և բացատրի պարբերության անհրաժեշտությունը և կիրառությունը տեքստում: Բաժանի տեքստերը ըստ պարբերությունների:</li> <li>Ստեղծի ծավալուն և ոչ ծավալուն խոսք՝ պահպանելով տեքստի կառուցվածքը, պարբերությունները:</li> <li>Ըստ թեմայի ստեղծի տարաբնույթ ուսումնական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեղեկատու և այլն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:</li> <li>Կազմի կառուցվածայնորեն ամբողջական տեքստ: Բաժանի տեքստերն ըստ պարբերությունների, փոփոխի (մեծացնել, կրճատել) պարբերությունները:</li> <li>Ստեղծի ծավալուն և ոչ ծավալուն խոսք՝ պահպանելով տեքստի կառուցվածքը, պարբերությունները:</li> <li>Ըստ թեմայի ստեղծի տարաբնույթ ուսումնական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, տեղեկատու, անիմացիա, տեսանյութ և այլն:</li> </ol>
	<b>Նախագիծ</b>	<ol style="list-style-type: none"> <li>Ձևակերպի հետազոտական հարցը, հետազոտության հիմնախնդիրը և նպատակը դրույթի վերաբերյալ:</li> <li>Առանձնացնի համապատասխան աղբյուրներ, հավաքի փաստեր, պլանավորի քայլաշար:</li> <li>Տեղեկությունները ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:</li> <li>Ցուցադրի միջառարկայական կապերը, փաստարկի օրինակներով, կատարի հղումներ և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Ձևակերպի հետազոտական հարցը, հետազոտության հիմնախնդիրը և նպատակը դրույթի վերաբերյալ:</li> <li>Առանձնացնի համապատասխան աղբյուրներ, հավաքի փաստեր, պլանավորի քայլաշար:</li> <li>Տեղեկությունները ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:</li> <li>Ցուցադրի միջառարկայական կապերը, փաստարկի օրինակներով, կատարի հղումներ և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Ձևակերպի հետազոտական հարցը, հետազոտության հիմնախնդիրը և նպատակը դրույթի վերաբերյալ:</li> <li>Առանձնացնի համապատասխան աղբյուրներ, հավաքի փաստեր, պլանավորի քայլաշար:</li> <li>Տեղեկությունները ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:</li> <li>Ցուցադրի միջառարկայական կապերը, փաստարկի օրինակներով, կատարի հղումներ և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում:</li> </ol>
<b>ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>Վերաբերմունք</b>	<ol style="list-style-type: none"> <li>Համագործակցի ընկերների հետ՝ հիմնավորելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:</li> <li>Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</li> <li>Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Համագործակցի ընկերների հետ՝ հիմնավորելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:</li> <li>Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</li> <li>Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Համագործակցի ընկերների հետ՝ հիմնավորելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:</li> <li>Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:</li> <li>Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի</li> </ol>

		4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:	նկատմամբ: 4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:	նկատմամբ: 4. Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:
	<b>Արժևորում</b>	1. Արժևորի մայրենի լեզվի դերը այլ լեզուների շարքում: 2. Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն: 3. Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը: 4. Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի հնարավորությունները թարգմանական գրականության մեջ:	1. Արժևորի մայրենի լեզվի դերը այլ լեզուների շարքում: 2. Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն: 3. Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը: 4. Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի հնարավորությունները թարգմանական գրականության մեջ:	1. Արժևորի մայրենի լեզվի դերը այլ լեզուների շարքում: 2. Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն: 3. Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը: 4. Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի հնարավորությունները թարգմանական գրականության մեջ:

**ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ**

**ԾՐԱԳԻՐ**

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

(շաբաթական 3 ժամ, տարեկան՝ 102 ժամ)

<b>ԹԵՄԱ 1</b>	
<b>ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ - 2 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
Ձևավորել համակարգային մտածողություն, դասակարգելու, տարբերակելու կարողություն	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տարբերակի</i> ընդհանուր հատկանիշներ ունեցող բառերը:</li> <li>2. <i>Ձանազանի</i> նրանց գործածության շրջանակները, <i>բերի</i> օրինակներ:</li> <li>3. <i>Փոխարինի</i> հոմանիշներով և հականիշներով:</li> <li>4. <i>Դասակարգի</i> բառերն ըստ գործածության հաճախականության:</li> <li>5. <i>Կազմի</i> երկխոսություն համապատասխան բառաշարքով:</li> <li>6. <i>Փոփոխի</i> բառերն ըստ անհրաժեշտության (վերջավորություններ):</li> <li>7. <i>Արտածի</i> քերականության մեջ տիրող դասավորվածությունը կյանքի օրինաչափությունների վրա, <i>Նշի</i> առավելությունները:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
խոսքի մասեր	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Ստեղծել խոսքի մասերի տևակներ:</li> <li>• Տարբեր իրադրություններին և սոցիալական վիճակներին համապատասխան երկխոսություն վարել, նկարել և ցուցադրել:</li> <li>• Տրված բառերը դասակարգել ըստ ընդհանուր հատկանիշների և ըստ ոլորտների:</li> <li>• Ստեղծել իրավիճակներ, դրանց համապատասխան խոսք կազմել՝ կիրառելով առանձնացրած բառերը:</li> <li>• Գտնել տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, բառակազմական վերլուծության ելքարկել, արմատներով կազմել նոր բառեր:</li> <li>• Խոսք կազմել տրված բառերով (դերախաղ, մնջախաղ)</li> <li>• Տրված բառերով բնութագրել մարդկանց կամ իրադրությունը:</li> <li>• Տրված նկարները համապատասխանեցնել բառերին:</li> <li>• Տեսանյութ պատրաստել:</li> </ul>	<p><b>Օրինաչափություն:</b> Խոսքի մասերի դասակարգումն ըստ օրինաչափությունների:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Բառը՝ որպես կառուցվածք: Նրա գործառույթը խոսքում:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Մաթեմատիկա, ֆիզիկա:</b> Գրագետ հաղորդակցում, խոսքի հարստացում մասնագիտական բառերով, մասնագիտական բառերի հասկանալով կիրառություն:</p> <p><b>Պատմություն:</b> Պատմական այս կամ այն դեպքերն ուսումնասիրելիս հարցերի առաջադրում, տրված բառերի դասակարգում՝ ըստ պատմական ժամանակաշրջանի:</p> <p><b>Գրականություն, արվեստ:</b> Տեքստերում հանդիպած բառերի առանձնացում ըստ իմաստի և ձևի: Արվեստին բնորոշ բառերի, բառապատկերների կիրառություն խոսքում, նկարագրողում:</p>	
<b>Կապը Հանրակրթության չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	

<b>ԹԵՄԱ 2</b>	
<b>ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ – 40 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք կազմելու հմտություններ</li> <li>• Ընդլայնել սովորողի իմացության շրջանակը</li> </ul>	

**Վերջնադրույուններ**

1. *Դասակարգի* գոյականներն ըստ ոլորտների և կիրառելի խոսքում:
2. *Տարբերակի* գոյականի ձևափոխություններն ըստ հոլովների և *ճիշտ կիրառի* հոլովումները:
3. *Ներկայացնի* գոյականի՝ հոգնակիում ստացած վերջավորությունները, նրանց կիրառության շրջանակներն ու դեպքերը:
4. *Կազմի* եզակի թվով դրված բառերի հոգնակի թիվը և *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում:
5. *Խմբավորի* հավաքական և հոգնակի թվով գոյականները, *թվարկի* նրանց գործածության շրջանակները, *բերի* օրինակներ:
6. *Փոխարինի* հոգնակիի կազմության հոմանիշ ձևերն իրարով և *ճշտի* կիրառության ոլորտները:
7. *Տարբերակի* հոդերը և *ճիշտ կիրառի* խոսքում:
8. *Կապեր տեսնի* կետադրության և հոդերի կիրառության միջև:
9. *Համեմատի* տարբեր ոճերի տեքստերը՝ բացահայտելով հոդերի կիրառության շրջանակները:

**Բովանդակություն**

1. Տեսակները՝ անձանիշ, իրանիշ, հատուկ և հասարակ (10 ժամ)
2. Գոյականի թիվը՝ եզակի և հոգնակի: Հավաքական, անեզակական և անհոգնական գոյականներ (10)
3. Գոյականի հոլովը:
4. Հոլովում-արտաքին, ներքին, այլաձև, զուգաձև (14)
5. Հոդեր՝ որոշիչ, ստացական, դիմորոշ, ցուցական (6)

**Առաջարկվող գործունեության ձևեր**

- Խաչբառներ կազմել և խաղ քարտեզով:
- Երևակայության օգնությամբ ուղևորվել տարբեր երկրներ, դուրս բերել աշխարհագրական անվանումների գրության օրինաչափությունները:
- Հաղորդել հետաքրքիր տեղեկություններ նշանավոր մարդկանց մասին, գտնել և ցույց տալ գրության օրինաչափությունները:
- Կազմել վիկտորինաներ, ցույց տալ գրության օրինաչափությունները:
- Տրված տեքստում եզակի թվով բառերը վերածել հոգնակիի և վերաշարադրել տեքստը:
- Բացահայտել անեզակական և անհոգնական գոյականների գործածության ոլորտները, կազմել իրադրական խոսք:
- Ցույց տալ հոդերի ընտրությունը և կիրառությունը տարբեր ոճերի տեքստերում:
- Քերականորեն վերլուծել տարբեր տեքստեր:
- Գրել երկխոսություն, մենախոսություն տրված կամ ինքնուրույնաբար ընտրած թեմայով:
- Գտնել, բացատրել հոլովական զուգաձևությունները՝ ցույց տալով դրանց կիրառության ոլորտները:
- Գտնել թեմային համապատասխան ասույթներ, առած-ասացվածքներ, դրանք կիրառել խոսքի մեջ:
- Համեմատել արձակ և չափածո տեքստեր:
- Բանավեճ կազմակերպել որևէ թեմայով:
- Դերախաղ՝ «Խանութում-զևումներ կատարելիս»

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

**Օրինաչափություն:**  
Գոյականի վերջավորությունների օրինաչափությունները:

**Կառուցվածք և գործառույթ:**  
Բառը՝ որպես կառուցվածք: Նրա գործառույթը խոսքում:

**Կայունություն և փոփոխություն:**  
Հոլովական և հոգնակիակերտ վերջավորությունների կայունությունն ու ներքին փոփոխությունների հնարավորությունը:

**Միջառարկայական կապեր**

**Պատմություն, աշխարհագրություն:** Աշխարհագրական, պատմական անվանումների ճիշտ գործածում, ոլորտային բառերով խոսքի կազմում, պատմական և աշխարհագրական իրողություններն արտահայտող բառերի դուրսգրում, խաչբառների և այլ խաղերի հորինում՝ բառերի բացատրությունը յուրացնելու նպատակով

**Գրականություն, արվեստ:** Գրողների և այլ նշանավոր անձանց և նրանց ստեղծագործությունների անվանումների ճանաչում և անսխալ գործածում, դրանց հոմանիշների ու հակահիշների կազմում, պատմության պատկերազարդում և ներկայացում

**Հասարակագիտություն: Արվեստ:** Անհատի, նրա իրավունքների ու պարտականությունների, իր նախասիրություններ ճիշտ հոլովաձևերով և թվով ներկայացում, հարցերի առաջադրում կոնկրետ թեմաների շուրջ, հարցազրույցների վարում

**Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրույունների հետ**

II-9-Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46

**ԹԵՄԱ 3**

**ԱՃԱԿԱՆ ԱՆՈՒՆ- 10**

**Նպատակը**

- Նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառմանը
- Չարգացնել պատկերավոր խոսք

**Վերջնադրույուններ**

1. *Ճանաչի* հիմնական հատկանիշները:
2. *Տարբերակի* ածականի տեսակները:
3. *Կիրառի* խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով:
4. *Կազմի* պատկերավոր խոսք:

**Բովանդակություն**

1. Ածական: (1)
2. Հատկանիշները, տեսակները: Համեմատության աստիճանները (4)
3. Կազմությունը (2)
4. Կիրառությունը (3)

**Առաջարկվող գործունեության ձևեր**

- Խոսքը հագեցնել ածականով կամ բեռնաթափել դրանցից:
- Բացահայտել ածականի հատկանիշները, կիրառել խոսքում:
- Կազմել տարբեր կազմության ածականներ:
- Քերականորեն վերլուծել տարբեր ոճերի տեքստեր:
- Կազմել երկխոսություն, մենախոսություն կամ պատմություն՝ կիրառելով ածականներ (բանավոր և գրավոր):
- Նկարագրել առարկաներ, երևույթներ կամ մարդկանց՝ կիրառելով համապատասխան ածականներ:
- Կազմել նկարագրական խոսք՝ կիրառելով համապատասխան ածականներ, դրանք փոխարինել հոմանիշներով և հակահիշներով:
- Ստեղծել դերախաղեր և մասնակցել դրանց:
- Ըստ տրված տեքստի՝ լրացնել, ավարտել կամ հորինել նոր պատմություններ:
- Հայտնի մարդկանց բնութագրում ածականների կիրառությամբ:

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

**Օրինաչափություն:**  
Բառերի համեմատելի հատկանիշների համար կիրառվող ձևերի օրինաչափությունը:

**Կառուցվածք և գործառույթ:**  
Ածականի համեմատության աստիճանների կառուցվածքը և դրսևորումը կիրառության մեջ:

	<b>Անհատ և հարաբերություններ:</b> Ածականի միջոցով անհատների և հասարակությունների արժեհամակարգերի ներկայացում, վերաբերմունքի դրսևորում:
<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Գրականություն:</b> Ածականի տեղին և ճիշտ կիրառության արժևորում, պատկերավոր խոսքի կազմում, պատկերավորման միջոցների կիրառում գրավոր և բանավոր խոսքում:	
<b>Պատմություն:</b> <b>Հասարակագիտություն:</b> <b>Արվեստ :</b> Ածականների ուղիղ և փոխաբերական կիրառությամբ խոսքի հարստացում, արժևորում, այս կամ այն իրողության վերաբերյալ վերաբերմունքի դրսևորում:	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրյունների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	

<b>ԹԵՄԱ 4</b>	
<b>ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ – 10 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ</li> <li>• Նպաստել փաստարկված խոսք կազմելու մեջ թվականների արժևորմանը</li> </ul>	
<b>Վերջնադրյուններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Անսխալ <i>գրի և արտասանի</i> թվականները:</li> <li>2. Ճիշտ <i>կարդա</i> տառակապակցությունների թվային արժեքները:</li> <li>3. <i>Տարբերակի</i> թիվ, թվային կարգ, քանակ, թվանշան հասկացությունները:</li> <li>4. <i>Մեկնաբանի</i> արաբական և հռոմեական թվերի գործածության հիմնավորումներն ու անհրաժեշտությունը:</li> <li>5. <i>Գնահատի և հիմնավորի</i> թվերի կիրառության հաճախականությունը տարբեր ոճերում:</li> <li>6. <i>Համեմատի</i> թվականի տեսակները և <i>վեր հանի</i> օրինաչափությունները:</li> <li>7. <i>Գրի</i> թվերը տառերով և հակառակը:</li> <li>8. <i>Հասկանա</i> թվերին դիմելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:</li> <li>9. <i>Կառուցի</i> խոսք, <i>ստեղծի</i> իրավիճակներ՝ թվականի տարբեր տեսակների ճիշտ կիրառությամբ:</li> <li>10. <i>Հարստացի</i> տեքստը թվականներով:</li> <li>11. <i>Ստեղծի</i> տեքստ, պատմություն:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ, կոտորակային, բաշխական) և դասական (5)</li> <li>2. Թվականի կազմությունը և ուղղագրությունը (2)</li> <li>3. Թվարկման գրավոր արտահայտության ձևերը (1)</li> <li>4. Թվականների գործածությունը տարբեր ոճերի տեքստերում (2)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Քերականորեն վերլուծել թվականներով հարուստ տարբեր ոճերի տեքստեր:</li> <li>• Տառակապակցությունները փոխարինել թվային արժեքով և հակառակը (շինությունների գրություններ, ստեղծագործությունների գլուխներ):</li> <li>• Կատարել տեղանքի մաթեմատիկական չափումներ, ամփոփել, կազմել տեղեկատու խոսք և ներկայացնել առկա և հեռակա լսարանին:</li> <li>• Քերականորեն վերլուծել պատմական և աշխարհագրական թեմաներով տեքստերը, կազմել աղյուսակներ թվային տեղեկությունները կանոնակարգելու և տեսանելի դարձնելու համար:</li> <li>• Քերականորեն վերլուծել չափածո ստեղծագործություններ, ցույց տալ դրանց և արձակ կամ առօրյա-խոսակցական խոսքի նմանությունները և տարբերությունները:</li> <li>• Գնահատել և կարծիք հայտնել դասընկերոջ կազմած տեքստի մասին և քերականորեն հիմնավորել սեփական տեսակետը:</li> <li>• Ելույթ ունենալ լսարանի առջև, հաղորդել թվեր պարունակող տեղեկություններ:</li> <li>• Ստեղծել դերային խաղերի սցենարներ, կազմակերպել և մասնակցել դրանց:</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Թվականների տեսակների կառուցվածքը և նրանց գործառույթը խոսքում:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Կայունությունն ու փոփոխությունը թվականների կազմության մեջ:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Գրականություն:</b> Չափածո ստեղծագործությունների ուսուցում (քանաստեղծական ռիթմը, չափը, վանկերի, տողերի, տների քանակը), մեկնաբանություններում թվականների տեսակների ճիշտ կիրառություն:	
<b>Պատմություն, Հանրահաշիվ, Բնագիտություն:</b> Թվականների ճիշտ գրություն և արտասանություն:	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրյունների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	

<b>ԹԵՄԱ 5</b>	
<b>ԴԵՐԱՆՈՒՆ – 20 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել դերանունների դերն ընկալելու, տեսակների դերը կարևորելու, ուղղակի և անուղղակի խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ</li> </ul>	
<b>Վերջնադրյուններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Ձևափոխի և կիրառի</i> դերանվան տարբեր տեսակներն ըստ անհրաժեշտության:</li> <li>2. Դերանունների հոմանիշ և հակահիշ գույգերը <i>ճիշտ կիրառի</i> գրավոր և բանավոր խոսքում:</li> <li>3. <i>Մեկնաբանի</i> ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքում դերանվան կիրառման անհրաժեշտությունը և իմաստի փոփոխությունները:</li> <li>4. <i>Գնահատի</i> դերանունների դերը խոսքում:</li> <li>5. <i>Համեմատի</i> դերանունների խոսքիմասային պատկանելություն ցույց տվող տեսակները:</li> <li>6. <i>Կառուցի</i> խոսք՝ դերանվան տարբեր տեսակների և հոդերի ճիշտ կիրառությամբ:</li> <li>7. <i>Փոփոխի և ստեղծի</i> տեքստեր՝ կիրառելով դերանուններ:</li> <li>8. <i>Ստեղծի</i> խոսք՝ կիրառելով դերանուններ:</li> <li>9. <i>Ներկայացի</i> տարբեր դերախաղեր:</li> </ol>	

10. Հոդերը <i>փոխարինի</i> դերանուններով և հակառակը:	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Դերանուն (1)</li> <li>Դերանվան տեսակները (անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական/հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական) (10)</li> <li>Դերանունների հոլովումը (6)</li> <li>Հոդերով փոխարինման օրինաչափությունները (3)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>Տրված տեքստի տարբեր խոսքի մասերը փոխարինել համապատասխան դերանուններով:</li> <li>Դերանունները կիրառել տարբեր ոճի տեքստերում և բացատրել տվյալ ոճով պայմանավորված կիրառության հաճախությունը:</li> <li>Քերականորեն վերլուծել գրական և հասարակագիտական տեքստեր, ցույց տալ դերանունների կիրառությունը խոսքի մեջ:</li> <li>Տարբեր ոճերի տեքստերում լրացնել, ավարտել, փոխարինել, կիրառել համապատասխան դերանուններ:</li> <li>Տրված տեքստում հոդերի փոխարեն կիրառել դերանուններ և հակառակը:</li> <li>Տեքստում ցույց տալ եզակի և հոգնակի թվով դերանունների կիրառությունը, տեքստը վերաշարադրել՝ փոփոխելով դերանունների թիվը, դեմքը, հոլովը:</li> <li>Փոխակերպել ուղղակի խոսքը անուղղակիի և հակառակը:</li> <li>Կազմել երկխոսություններ տարբեր թեմաներով:</li> <li>Լսել, ձայնագրել շրջապատողների, հեռուստահաղորդումների ժամանակ հնչող խոսքը, ցույց տալ դերանունների կիրառության հաճախությունը, լեզվական սայթաքումները:</li> <li>Գրել, խմբագրել հաղորդագրություններ, նամակ, տեսակապի խոսք:</li> <li>Ժամանակակից թեմաներով մշակել և անցկացնել հարցազրույցներ կրթարանի ներսում և կրթարանից դուրս, անցորդների, հասակակիցների, նշանավոր մարդկանց հետ, արդյունքները ամփոփել և ներկայացնել լսարանին:</li> <li>Գրել դերախաղերի սցենարներ, կազմակերպել և ներկայացնել դասարանում:</li> </ul>	<p><b>Օրինաչափություն:</b> Դերանունների դասակարգման օրինաչափությունը:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Դրանց պարբերականությունը դերանունների տեսակների և հոլովառության ուսուցման մեջ:</p> <p><b>Անհատ և հարաբերություններ:</b> Դերանունների միջոցով անհատների և հասարակությունների արժեհամակարգերի ներկայացում, վերաբերմունքի դրսևորում:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում դերանունների դերի բացահայտում, դրանց համաձայնությունը բայերի հետ, օրինաչափությունների հաստատման համար օրինակների դուրսբերում գրականությունից:</p> <p><b>Հասարակագիտական առարկաներ:</b> Դերանունների ճիշտ կիրառություն, տեսակետների հավաքագրում՝ կիրառելով համապատասխան դերանուններ (ճիշտ թվով), հասարակական թեմաներով հարցազրույցների վարում՝ կիրառելով հարգալից խոսքի կանոններ:</p>	
<b>Կապը Հանրակրթության Զափորոշի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	

<b>ԹԵՄԱ 6</b>	
ԲԱՅ – 40 ժամ	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Ձևավորել տարբեր բնույթի նախադասություններում բայաձևերը ճիշտ կիրառելու, բայն իր բոլոր ձևերով խոսքի մեջ կիրառելու հմտություններ, ժամանակը ճիշտ պատկերացնելու և համապատասխան բայաձևերով արտահայտելու, ճիշտ և սխալ ձևերի տարբերակման կարողություն</li> <li>Ձարգացնել հաղորդակցական հմտությունները</li> </ul>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Տարբեր բառերից <i>ստանա</i> բայեր, <i>տարբերակի</i> դիմավոր և անդեմ ձևերը, <i>որոշի</i> խոնարհումը և <i>կիրառի</i> խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով:</li> <li><i>Տարբերակի</i> բայաձևերը, պարզ և ածանցավոր բայերը, ճիշտ կիրառի խոսքում:</li> <li><i>Համեմատի</i> տարբեր կազմություն բայերն իրար հետ՝ նշելով ընդհանրություններն ու տարբերությունները:</li> <li>Անդեմ և դիմավոր բայերը <i>ճիշտ կիրառի</i> խոսքում:</li> <li>Տարբեր ոճի տեքստերում <i>գտնի</i> անդեմ և դիմավոր բայերը:</li> <li><i>խոնարհի</i> դիմավոր բայերը, <i>որոշի</i> դեմքը, թիվը, ժամանակը և <i>կիրառի</i> խոսքում:</li> <li>Տեքստում <i>գտնի</i> տարբեր եղանակաձևերը, դրանք <i>ճիշտ կիրառի</i> խոսքում:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Բայը որպես խոսքի մաս, խոնարհումը (5)</li> <li>Բայի կազմությունը – պարզ և ածանցավոր բայեր (2)</li> <li>Ածանցավոր բայերի տեսակները (սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական, կրավորական) (10)</li> <li>Անդեմ բայեր (անորոշ, համակատար, հարակատար, ենթակայական), կազմությունն ու խոնարհումը, ձևաբայեր (10)</li> <li>Դիմավոր բայեր: Բայի եղանակները: Կազմությունն ու խոնարհումը (դրական և ժխտական) (7)</li> <li>Անկանոն և պակասավոր բայեր (6)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>

<ul style="list-style-type: none"> <li>• Տեքստում տեղադրել համապատասխան բայերը:</li> <li>• Տեքստում գտնել պարզ և ածանցավոր բայերը, բացատրել դրանց խոնարհումը:</li> <li>• Տրված բայերից կազմել տարբեր ածանցներով բայեր, ցույց տալ խոնարհումը:</li> <li>• Գրական և ոչ գրական տեքստերում գտնել բայերը և բացատրել դրանց կիրառությունը:</li> <li>• Գտնել և ուղղել տեքստում սպորտային տարբերակները:</li> <li>• Հորինել դերախաղեր՝ ճիշտ կիրառելով բայերը:</li> <li>• Ներկա, անցյալ և ապառնի ժամանակներին համապատասխան բայաձևեր կիրառել</li> <li>• Կազմել տարբեր ոճերի գրավոր խոսք, ցույց տալ, բացատրել բայերի կիրառությունը:</li> <li>• Մշակել, վարել հարցազրույցներ տարբեր մարդկանց հետ՝ կիրառելով տարբեր ժամանակաձևերի բայեր:</li> <li>• Կազմել ընդունելի և մերժելի գործողությունների ցանկ՝ կիրառելով տարբեր բայաձևեր, ցույց տալ խոնարհումը:</li> <li>• Ստեղծել բայի քերականական հատկանիշներն ամբողջացնող, ճիշտ և սխալ կիրառությունները լուսաբանող սահիկաշար, պաստառ, տեսաֆիլմ, դրանք ցուցադրել առկա և հեռակա լսարանին:</li> <li>• Ստեղծել պաստառ, գովազդ, հայտարարություն՝ դրանց տեքստերում կիրառելով տարբեր բայաձևեր:</li> <li>• Ձայնագրել փոթբասո՝ բայի կիրառության շուրջ, տարածել սոցցանցերում:</li> </ul>	<p><b>Օրինաչափություն:</b> Օրինաչափություն ամեն ինչում, ամենուր, դասակարգում, բայի կազմության օրինաչափություններ:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Կայունությունը՝ համեմատաբար անփոփոխ լեզվական համակարգ, փոփոխությունները բայի քերականական կարգերում:</p> <p><b>Ժամանակ և տարածություն:</b> Ժամանակի դրսևորումները բայի խոնարհման հարացույցում, գործողության և վիճակի հարաբերությունը տարածության մեջ:</p>
---	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական ստեղծագործություններում բայերի գործածության ձևերի անհարժեշտության ընկալում, լեզվական օրինաչափությունների հիմնավորում գրական երկերով, պատումների ստեղծում:

**Բնագիտական և հասարակագիտական առարկաներ:** Բայաձևերի ճիշտ կիրառություն, տարբեր եղանակների բայերի տեղին գործածում այդ ոլորտներին վերաբերող տեքստերի քննության ժամանակ, հետևողականություն անկանոն բայերի ճիշտ կազմության հարցում:

**Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրյունների հետ**

II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46

**8-րդ դասարան**  
(շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

<b>ԹԵՄԱ 1</b>	
ՄԱԿԲԱՅ – 8 ժամ	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել մակբայի տեսակները տարբերակելու, նրանց դերը արժևորելու, ճիշտ խոսք կառուցելու, ածականից տարբերելու կարողություններ</li> </ul>	
<b>Վերջնադրյուններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Ճանաչի և տարբերակի</i> մակբայի տարբեր տեսակներն ըստ անհարժեշտության:</li> <li>2. Մակբայների հոմանիշ և հակառակիշ գույգերը <i>ճիշտ կիրառի</i> գրավոր և բանավոր խոսքում:</li> <li>3. <i>Չնահատի</i> մակբայների դերը խոսքում:</li> <li>4. <i>Համեմատի</i> մակբայներն ու ածականները, <i>դուրս բերի</i> ընդհանրություններն ու տարբերությունները:</li> <li>5. <i>Կառուցի</i> խոսք՝ մակբայների տարբեր տեսակների կիրառությամբ:</li> <li>6. <i>Փոփոխի և ստեղծի</i> տեքստեր՝ կիրառելով մակբայներ:</li> <li>7. <i>Ստեղծի</i> խոսք՝ կիրառելով մակբայներ:</li> <li>8. <i>Ներկայացնի</i> տարբեր դերախաղեր:</li> <li>9. Բառերն ու բառակապակցությունները <i>փոխարինի</i> մակբայներով և հակառակը:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Մակբայ: Մակբայի տեսակները (ժամանակի, ձևի, տեղի, չափի ու քանակի, ընդհանրական) (6)</li> <li>2. Խոսքիմասային փոխանցումներ (2)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող և ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Կատարել խոսքային փոխակերպումներ (բառակապակցությունները՝ մակբայներով և հակառակը):</li> <li>• Տեքստը հագեցնել գործողության հատկանիշ ցույց տվող բառերով:</li> <li>• Մակբայները կիրառել տարբեր ոճի տեքստերում և բացատրել հաճախությունը՝ կախված ոճից:</li> <li>• Քերականորեն վերլուծել գրական և ոչ գրական տեքստերը, ցույց տալ մակբայների գործածության հաճախությունը տարբեր տեքստերում:</li> <li>• Կազմել, լրացնել, ավարտել, փոխարինել տարբեր ոճերի տեքստեր:</li> <li>• Ստեղծել պաստառ՝ ցույց տալով մակբայների ճիշտ և սխալ հոլովառության դեպքերը, ներկայացնել լսարանին:</li> <li>• Մշակել և անցկացնել երկխոսություններ տարբեր մասնագիտությունների, տարբեր տարիքի անձանց հետ, ձայնագրել նրանց խոսքը, նրանց խոսքում ցույց տալ մակբայների կիրառության հաճախությունը, համապատասխանությունը ձևաբանական օրինաչափություններին, հանդես գալ ամփոփիչ խոսքով:</li> <li>• Հորինել ժամանակակից թեմաներով դերախաղերի բեմադրեր (սցենարներ), դրանք բեմադրել դասընկերների հետ:</li> <li>• Գրել, խմբագրել, ձայնագրել հաղորդագրություններ, նամակ, տեսակապի տեքստեր:</li> </ul>	<p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Մակբայների՝ գործողության հատկանիշ դրսևորելու կայուն հատկանիշը և ներքին փոփոխություններ կրելու առանձնահատկությունը:</p> <p><b>Ժամանակ և տարածություն:</b> Մակբայների՝ ժամանակ, տեղ և գործողության այլ հատկանիշներ դրսևորելու առանձնահատկությունը:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում մակբայների հայտնաբերում, նրանց իմաստաբանական դերի գնահատում, լեզվական գիտելիքների հասկացման համար գրականությունից օրինակների հիշատակում:</p> <p><b>Հասարակագիտական առարկաներ:</b> Մտքերը ձևակերպելիս մակբայների ճիշտ կիրառում, ոլորտին վերաբերող քննարկումներում տեսակների տեղին գործածում:</p>	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրյունների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	
<b>ԹԵՄԱ 2</b>	

<b>ԿԱՊ – 5 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
Ձևավորել կապերի տեսակները տարբերակելու, հոլովառության, անձնանիշ և իրանիշ գոյականների հետ գործածության հմտություններ, նպաստել ճիշտ խոսքի կազմմանը	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տարբերակի</i> կապերի տեսակները, նրանց հոլովառական առանձնահատկությունները:</li> <li>2. <i>Դասակարգի</i> հոմանիշ և հականիշ, նույն հոլովառն պահանջող կապերը:</li> <li>3. <i>Մեկնաբանի</i> կապերի և կապական բառերի ընդհանրություններն ու տարբերությունները:</li> <li>4. <i>Կառուցի</i> խոսք՝ կապական կառույցների կիրառությամբ:</li> <li>5. <i>Փոփոխի և ստեղծի</i> տեքստեր՝ կիրառելով կապեր և կապական բառեր:</li> <li>6. <i>Աշխատի</i> գրական տեքստերի հետ:</li> <li>7. <i>Ստեղծի</i> գովազդ՝ կիրառելով միայն կապական կառույցներ:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Կապ, տեսակները (2)</li> <li>2. Կապերի հոլովառությունը (3)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական նաակացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Տրված տեքստում գտնել կապերը, կապվող բառերը կիրառել ճիշտ հոլովառումով:</li> <li>• Քերականորեն վերլուծել գրական և ոչ գրական տեքստերը, ցույց տալ կապերի կիրառության հաճախությունը:</li> <li>• Տրված տեքստերում ցույց տալ (վերլուծել, լրացնել, փոփոխել) կապերի կիրառությունը անձնանիշ և իրանիշ գոյականների, առաջին և երկրորդ դեմքի դերանունների հետ:</li> <li>• Ստեղծել պատահական, սահիկաշար կամ տեսանյութ կապերի կիրառության ճիշտ և սխալ ձևերի համադրությամբ, ներկայացնել լսարանին:</li> <li>• Տարբեր տեքստերի վերլուծությամբ ցույց տալ կապերի համանունների, հոմանիշների և հականիշների առանձնահատկությունները:</li> <li>• Հորինել քառատողեր՝ կիրառելով կապեր:</li> <li>• Գրել, մշակել, խմբագրել հաղորդագրություններ, նամակ, տեսակապի տեքստեր:</li> <li>• Մշակել, անցկացնել և ձայնագրել հարցազրույցներ տարբեր տարիքի և մասնագիտության անձանց շրջանում, ցույց տալ կապերի կիրառության հաճախությունը նրանց խոսքում, ամփոփիչ խոսքով հանդես գալ լսարանի առջև:</li> <li>• Գրել կարծիք, գնահատել դիտած ներկայացումը, կինոնկարը:</li> <li>• Մշակել տարբեր դերախաղերի բեմադրեր (սցենարներ), դրանք բեմադրել դասընկերների հետ:</li> </ul>	<p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Կապերի՝ դիրքային կայունություն ունենալու առանձնահատկությունը, բայց և փոփոխությունների ենթակա լինելը:</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b> Պատճառահետևանքային կապերի քննություն կապի և կապվող բառի հարաբերություններում:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում կապերի դերի վերհանում, գրական վերլուծություններում դրանց ճիշտ կիրառում:	
<b>Հասարակագիտական առարկաներ:</b> Խոսք կազմելիս անձնանիշ և իրանիշ գոյականների հետ կապերի ճիշտ կիրառություն:	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
II-9-Հ1, Հ2, Հ16, Հ23, Հ25, Հ26, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ37, Հ42, Հ44, Հ45, Հ46	

<b>ԹԵՄԱ 3</b>	
<b>ՃԱՂԿԱՊ – 5 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել շաղկապի տեսակները տարբերակելու, ճիշտ կետադրելու, բառեր և նախադասություններ կապելու դերը հասկանալու և խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ</li> </ul>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Դասակարգի</i> շաղկապներն ըստ տեսակների և կիրառել խոսքում:</li> <li>2. <i>Փոխարինի</i> շաղկապները նույն կամ մոտ իմաստ արտահայտողներով</li> <li>3. <i>Խմբավորի</i> նույն տեսակին պատկանող շաղկապները:</li> <li>4. <i>Տարբերակի</i> համադասական և ստորադասական շաղկապները:</li> <li>5. Շաղկապները տեղին <i>կիրառի</i> խոսքում:</li> <li>6. <i>Տարբերակի</i> շաղկապների համանունները:</li> <li>7. <i>Կազմի</i> խոսք՝ կիրառելով շաղկապներ:</li> <li>8. <i>Համեմատի</i> տարբեր ոճերի տեքստերը՝ բացահայտելով շաղկապների կիրառության շրջանակները:</li> <li>9. <i>Կետադրի</i> նախադասությունները:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Շաղկապ: Տեսակները (3)</li> <li>2. Կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը (2)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Կանխատեսել բաց թողած շաղկապը և լրացնել:</li> <li>• Կապակցել գեղարվեստական և գիտական ոճի նախադասությունները համապատասխան շաղկապներով:</li> <li>• Գտնել և ցույց տալ շաղկապների տարբեր տեսակների դերը տվյալ տեքստում (կրկնադիր շաղկապների դերը նախադասությունների կապակցության մեջ):</li> <li>• Կազմել վիկտորինաներ, անցկացնել դասընկերների շրջանում:</li> <li>• Ավարտել միտքը՝ շարունակելով ստորադասական շաղկապների կիրառմամբ:</li> <li>• Կետադրել համը բնագրերը՝ տալով համապատասխան բացատրություններ:</li> <li>• Ձևաբանորեն վերլուծել տարբեր տեքստեր:</li> <li>• Մշակել, կազմել, ձայնագրել երկխոսություն, մենախոսություն, ցույց տալ շաղկապների կիրառության հաճախությունը:</li> <li>• Գտնել համատարաստախան ասույթներ, առած-ասացվածքներ, ցույց տալ և բացատրել շաղկապների կիրառության դեպքերը, ոճական նշանակությունը:</li> <li>• Համեմատել արձակ և չափածո տեքստեր, դրանցում ցույց տալ շաղկապների կիրառության</li> </ul>	<p><b>Օրինաչափություն:</b> Նախադասությունների միջև հարաբերությունների օրինաչափությունը:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Լեզվական-քերականական հատկանիշների հստակ կառուցվածք, կիրառության մեջ ինքնադրսնորվելու այլ առանձնահատկություններ:</p> <p><b>Պատճառ ու հետևանք:</b> Բառակապակցությունների և նախադասությունների կապակցման պատճառահետևանքային կապերը:</p>



հաճախությունը, ոճական արժեքը:
<b>Միջառարկայական կապեր</b>
<b>Պատմություն, աշխարհագրություն:</b> Գիտական տեքստերում շաղկապների ճիշտ գործածություն, պատճառահետևանքային կապերով հիմնավորում, լեզվական գիտելիքների յուրացումը հաստատելու համար այդ ոլորտին վերաբերող տեքստերից օրինակներ:
<b>Գրականություն, արվեստ:</b> Շաղկապների ճանաչում և մեկնաբանություններում անսխալ գործածում, պատճառահետևանքային կապերը ներկայացնելիս համապատասխան շաղկապների կիրառում, նախադասությունների գծապատկերների ստեղծում
<b>Հասարակագիտություն: Արվեստ:</b> Անհատի և նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ճիշտ ներկայացում` շաղկապների ճիշտ կիրառությամբ:
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրույունների հետ</b>
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46

<b>ԹԵՄԱ 4</b>	
<b>ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ: ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ – 6 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Ձևավորել դատողական և զգացական վերաբերմունք արտահայտելու հմտություններ վերաբերականների և ձայնարկությունների կիրառմամբ, զարգացնել հաղորդակցական հմտություններ</li> </ul>	
<b>Վերջնադրույուններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Տարբերակի վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը:</li> <li>Վերաբերականների և ձայնարկությունների հոմանիշ և հականիշ գույգերը ճիշտ կիրառի գրավոր և բանավոր խոսքում:</li> <li>Մեկնաբանի ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքում նրանց կիրառման անհրաժեշտությունը և իմաստի փոփոխությունները:</li> <li>Գնահատի վերաբերականների և ձայնարկությունների դերը խոսքում:</li> <li>Համեմատի դատողական իմաստ արտահայտող բառերի տեսակները:</li> <li>Կառուցի խոսք` վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի կիրառությամբ:</li> <li>Փոփոխի և ստեղծի տեքստեր` կիրառելով վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը:</li> <li>Ստեղծի խոսք` կիրառելով կոչական և բնաձայնական ձայնարկություններ:</li> <li>Ներկայացնի տարբեր դերախաղեր:</li> <li>Աշխատի գրական տեքստերի հետ:</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր` վերաբերական և ձայնարկություն (3)</li> <li>Վերաբերականների և ձայնարկությունների տեսակները, ուղղագրություն և կետադրությունը (3)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>Փոխակերպել ուղղակի խոսքը անուղղակի և հակառակը:</li> <li>Տեքստը հագեցնել շարահյուսական հոմանիշներով:</li> <li>Ձևաբանորեն վերլուծել գրական և ոչ գրական տեքստեր:</li> <li>Ձևաբանության համապատասխան միջոցներով հուզականորեն արձագանքել տեսածին կամ լսածին:</li> <li>Վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերը կիրառել որպես նախադասություններ:</li> <li>Նմանաձայնական ձայնարկություններով ներկայացնել իրեր, կենդանիներ և թռչուններ:</li> <li>Մշակել և կազմել երկխոսություններ` ներկայացնելով դատողական և հուզական խառնվածք ունեցող անձանց:</li> <li>Մշակել, գրել բեմագրեր (սցենարներ) և ներկայացնել դասարանում:</li> <li>Կազմել հաղորդագրություններ, գրել նամակ, տեսակապի տեքստ:</li> <li>Մշակել և կազմել հարցազրույցներ, անցկացնել տարբեր տարիքի անձանց հետ, նրանց խոսքում նշել վերաբերականների, ձայնարկությունների առկայությունը:</li> <li>Հորինել տարբեր զգացողություններ ներկայացնող պատումներ:</li> <li>Նախագծել, մշակել և ստեղծել տեսանյութեր, անիմացիաներ` կիրառելով վերաբերմունքային իմաստ արտահայտող բառեր:</li> <li>Գրել տպավորություն թանգարան կամ ցուցահանդես այցելելուց հետո:</li> <li>Դերախաղ պատկերասրահում, ներկայացնել արվեստի գործեր:</li> <li>Քանդակներն ու կտավները ներկայացնել մեջախաղով:</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Լեզվական-քերականական, կայուն առանձնահատկությունների բացահայտում կիրառության մեջ:</p> <p><b>Անհատ և հարաբերություններ:</b> Տարբեր իրավիճակներ, մարդկային և հասարակական հարաբերություններ ներկայացնելիս յուրատեսակ վերաբերմունքի դրսևորում:</p>

<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Գրականություն:</b> Գրական ստեղծագործություններում կերպարների, հեղինակի դիրքորոշման ներկայացում` տեսակետը հիմնավորելով վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերի միջոցով:	
<b>Հասարակագիտական առարկաներ:</b> Դիրքորոշման արտահայտում վերաբերականների կիրառմամբ, կարդացածի և լսածի մասին տեսակետի արտահայտում վերաբերականներով և ձայնարկություններով:	
<b>Արվեստ:</b> Ուղեկցորդի դերի ստանձնում կտավի, քանդակի շուրջ:	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրույունների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	

<b>ԹԵՄԱ 5</b>	
<b>ՃԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ: ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ – 20 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Ձևավորել             <ol style="list-style-type: none"> <li>նախադասությունը բառակապակցությունից տարբերակելու,</li> <li>ըստ անհրաժեշտության և հաղորդակցման նպատակի համառոտ և ընդարձակ նախադասություններ կազմելու</li> <li>նրանց միջև տրամաբանական կապեր գտնելու և ստեղծելու կարողություններ:</li> </ol> </li> </ul>	
<b>Վերջնադրույուններ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Կազմի տարբեր տեսակի բառակապակցություններ, որոշի գերադաս անդամը:</li> <li>Բառակապակցությունները վերածի նախադասության և հակառակը:</li> <li>Տարբերակի բառակապակցություններն ու նախադասությունները:</li> </ol>	

<p>4. <i>Ճանաչի</i> դերբայական դարձվածը և <i>կետադրի</i>։</p> <p>5. <i>Համառոտի</i> և <i>ընդարձակի</i> նախադասությունները։</p> <p>6. <i>Դասակարգի</i> նախադասություններն ըստ հաղորդակցման նպատակի և ըստ կազմության։</p> <p>7. <i>Շարունակի, ավարտի, ամբողջացնի</i> նախադասությունները։</p> <p>8. <i>Կազմի</i> խոսք՝ կիրառելով պահանջվող տեսակի նախադասությունները։</p> <p>9. Նախադասության մեջ <i>առանձնացնի</i> բառակապակցությունները։</p>	
<b>Բովանդակություն</b>	
<p>1. Շարահյուսություն: Բառակապակցություն: Դերբայական դարձված (5)</p> <p>2. Նախադասություն: Տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի: (6)</p> <p>3. Նախադասության տեսակներն ըստ կազմության: (9)</p>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>Բառակապակցությունները վերածել նախադասության և հակառակը։</li> <li>Նախադասության մեջ գտնել դերբայական դարձվածները, կազմել և կիրառել խոսքում, վերածել նախադասության։</li> <li>Ավարտել միտքը՝ շարունակելով բառակապակցությամբ, ապա՝ նախադասությամբ։</li> <li>Ըստ իրադրության՝ համառոտ նախադասությունը ընդարձակել և հակառակը։</li> <li>Վերլուծել տարբեր տեքստեր՝ առանձնացնելով բառակապակցությունները։</li> <li>Փոխադրել տեքստը պահանջվող տեսակի նախադասություններով։</li> <li>Արտահայտել վերաբերմունք որևէ պատահարի կամ դեպքի հանդեպ՝ կիրառելով տարբեր բնույթի նախադասություններ։</li> <li>Գտնել տարբեր ասույթներ, առած-ասացվածքներ, ցույց տալ դրանց դերը և ոճական արժեքը խոսքի մեջ։</li> <li>Համեմատել արձակ և չափածո տեքստեր, ցույց տալ դրանց նմանությունները և տարբերությունները։</li> <li>Կազմել երկխոսություն, մենախոսություն, ցույց տալ պարզ կամ բարդ նախադասությունները։</li> <li>Ուշադիր լսել, ունկնդրի համաձայնության դեպքում ձայնագրել խոսքը, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախականությունը։</li> <li>Ուսումնասիրության արդյունքները ամփոփիչ խոսքով և սահիկաշարով ներկայացնել լսարանին։</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Բառակապակցություններն ու նախադասություններն իբրև կառուցվածք և դրա դրսևորումը գրավոր կամ բանավոր խոսքում։</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b> Կայուն բառակապակցություններ և նրանց հնարավոր փոփոխությունները։</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b> Նախադասությունների միջև եղած պատճառահետևանքային իմաստակիր կապերը։</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Պատմություն, աշխարհագրություն:</b> Գիտական տեքստերի վերարտադրում պարզ և բարդ նախադասություններով։</p> <p><b>Գրականություն, արվեստ:</b> Խոսքի վերարտադրում կամ վերլուծում համառոտ կամ ընդարձակ նախադասություններով։</p> <p><b>Հասարակագիտություն: Արվեստ:</b> Անհատի և նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ներկայացում համապատասխան բնութագրումներով և նախադասություններով։</p>	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
<p>II-9-31, 32, 316, 323, 325, 326, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 337, 342, 344, 345, 346</p>	

<b>ԹԵՄԱ 6</b>	
<b>ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆՊԱՄՆԵՐ – 24 ժամ</b>	
<b>Նպատակը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Ձևավորել <ul style="list-style-type: none"> <li>ա) նախադասության անդամները տարբերակելու</li> <li>բ) ըստ անհրաժեշտության և հաղորդակցման նպատակի համառոտ և ընդարձակ նախադասություններ կազմելու</li> <li>գ) նրանց միջև տրամաբանական և պատճառահետևանքային կապեր գտնելու և ստեղծելու կարողություններ։</li> </ul> </li> </ul>	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<ol style="list-style-type: none"> <li><i>Գտնի</i> նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, <i>որոշի</i> տեսակը։</li> <li>Նախադասությունն <i>ընդարձակի</i>՝ ներմուծելով երկրորդական անդամներ։</li> <li><i>Բացատրի</i> ենթակայի և ստորոգյալի արտահայտությունը և <i>կիրառի</i> գրավոր և բանավոր խոսքում։</li> <li><i>Կետադրի</i> համը նախադասությունները, տեքստը։</li> <li>Լրացումներն <i>արտահայտի</i> տարբեր խոսքի մասերով։</li> <li>Լրացումներն <i>արտահայտի</i> հոլովածով և կապական կառույցներով։</li> <li><i>Փոփոխի և ստեղծի</i> տեքստեր՝ կիրառելով լրացումներ։</li> <li><i>Վերականգնի</i> զեղչված անդամները։</li> <li><i>Մշակի</i> գրական և ոչ գրական տեքստերը (<i>գտնի, դասակարգի, փոփոխի, լրացնի, կանխատեսի, վերլուծի, խմբագրի</i>)։</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>Նախադասության գլխավոր անդամներ: Ենթակա և ստորոգյալ: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: Ենթակայի արտահայտությունը: Ստորոգյալի տեսակները, նրա արտահայտությունը (8)</li> <li>Գոյականական անդամի լրացումներ (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ) (8)</li> <li>Բայական անդամի լրացումներ (խնդիրներ և պարագաներ): Խնդրառություն և շարադասություն (8)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>Տրված բառերը առանձին-առանձին կիրառել նախադասությունների մեջ և՛ որպես ենթակա, և՛ որպես ստորոգյալ, և՛ որպես լրացում։</li> <li>Տեքստը հագեցնել լրացումներով, ցույց տալ դրանց դերը, ոճական նշանակությունը։</li> <li>Քերականորեն վերլուծել գրական և ոչ գրական տեքստերը, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների համամասնությունը։</li> <li>Գրել կարծիք կարդացած գրքի մասին, դասակարգել պարզ և բարդ նախադասությունները։</li> <li>Դեպքի, պատահարի մասին գրել հուզական արձագանք, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախությունը։</li> <li>Կազմել երկխոսություններ, հարցազրույցներ տարբեր թեմաներով, տարբեր մասնագիտության անձանց հետ: Ձայնագրել հարցազրույցները, վերլուծել հնչած</li> </ul>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Նախադասությունը որպես կառուցվածք: Կառուցվածքի գործառական դրսևորումները։</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b> Նախադասությունների միջև եղած պատճառահետևանքային իմաստակիր կապերը։</p>

<p>խոսքը, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների առկայությունը և դերը խոսքում:</p> <ul style="list-style-type: none"> <li>Գրել ելույթ տոնական կամ հարազատի, ընկերոջ ծննդյան օրվա առիթով, ցույց տալ պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախությունը, ոճական արժեքը:</li> </ul>	
--	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական ստեղծագործությունների վերլուծում, նախադասությունների կապակցման եղանակների առանձնացում, քննություն, վերլուծություն, մեկնաբանում գրագետ կազմված նախադասություններով:

**Հասարակագիտական առարկաներ:** Դիրքորոշման արտահայտում գրագետ նախադասությունների կիրառումը:

**Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46
--

**9-րդ դասարան**  
(շաբաթական 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

**ԹԵՄԱ 1**

**ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ – 40 ժամ**

**Նպատակը**

Ձևավորել տարբեր իրադրություններում համադասական և ստորադասական նախադասությունների կիրառման, սահմանված ժամանակի մեջ ավարտուն միտք արտահայտելու կարողություններ:

**Վերջնարդյունքներ**

- Կազմի տարբեր տեսակի նախադասություններ, որոշել տեսակը:
- Կետադրի բարդ նախադասությունները:
- Ճանաչի խոսքում համադասական և ստորադասական նախադասությունները:
- Համառոտի և ընդարձակի նախադասությունները:
- Ճարունակի, ավարտի, լրացնի նախադասությունները:
- Կազմի խոսք՝ կիրառելով պահանջվող տեսակի նախադասությունները:
- Նախադասության մեջ առանձնացնի բառակապակցությունները:
- Տարբերակի համադաս և ստորադաս հարաբերությունները:
- Կարծիք հայտնի կամ ակնարկ գրի որևէ մեկի կամ իրադարձության մասին:
- Ելույթ ունենալ լսարանի առաջ սահմանված ժամանակում:

**Բովանդակություն**

- Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն: Կապակցումն ու կետադրությունը: Չեղջումը: (10)
- Բարդ ստորադասական նախադասություն: Գերադաս և ստորադաս նախադասություններ: (10)
- Կապակցումն ու կետադրությունը: Չեղջումը: (10)
- Ստորադաս նախադասության շարադասությունն ու կետադրությունը: (10)

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

- Տրված պարզ նախադասությունը դարձնել բարդ և հակառակը:
- Փոփոխել համադասական նախադասության կապակցման ձևերը:
- Փոփոխել բարդ ստորադասական նախադասության կապակցման ձևերը և շարադասությունը:
- Ավարտել միտքը՝ շարունակելով նախադասությամբ:
- Քերականորեն վերլուծել տարբեր տեքստեր՝ առանձնացնելով նախադասություններն ըստ տեսակի:
- Կազմել տարբեր ոլորտներին առնչվող խոսք՝ կիրառելով բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ:
- Կազմել երկխոսություն, մենախոսություն, ցույց տալ բարդ նախադասությունները:
- Փոխադրել, վերաշարադրել տեքստը նախադասությունների պահանջվող տեսակներով:
- Արտահայտել վերաբերմունք՝ կիրառելով տարբեր բնույթի նախադասություններ:
- Տարբեր աղբյուրներից գտնել ասույթներ, առած-ասացվածքներ, ցույց տալ դրանցում կիրառված նախադասությունների տեսակները:
- Համեմատել արձակ և չափածո տեքստերը, ցույց տալ նախադասությունների տեսակները, դրանց ոճական արժեքը:
- Գրել կարծիք, ելույթ, հորինել տարբեր թեմաներով պատումներ:

**Կառուցվածք և գործառույթ:**  
Նախադասությունը՝ որպես կառուցվածք: Կառուցվածքի գործառական դրսևորումները:

**Պատճառ և հետևանք:**  
Նախադասությունների միջև եղած պատճառահետևանքային իմաստակիր կապերը:

**Միջառարկայական կապեր**

**Պատմություն, աշխարհագրություն:** Գիտական տեքստերի վերարտադրում բարդ նախադասություններով, գիտական ոճի տեքստերի կազմում և ներկայացում:

**Գրականություն, արվեստ:** Բարդ նախադասություններով մտքի վերարտադրում կամ վերլուծում, գծապատկերների ստեղծում, գրական ստեղծագործություններում դրանց քննություն:

**Հասարակագիտություն: Արվեստ:** Անհատի և նրա իրավունքների ու պարտականությունների, նախասիրությունների ներկայացում համապատասխան բնութագրումներով և նախադասություններով:

**Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ**

II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46
--

**ԹԵՄԱ 2**

**ՄԵԶԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ – 28 ժամ**

**Նպատակը**

Ձևավորել երկխոսություն և մենախոսություն վարելու և ստեղծելու հմտություններ, ուրիշի խոսքը անուղղակի փոխակերպելու և ճիշտ կետադրելու կարողություններ:

**Վերջնարդյունքներ**

- Կազմի տարբեր ոլորտներին առնչվող երկխոսություններ՝ կիրառելով համապատասխան բառապաշար:

<ol style="list-style-type: none"> <li>2. Ուրիշի խոսքը վերածի անուղղակիի և հակառակը:</li> <li>3. Երկխոսությունն վարի՝ կիրառելով բառ-նախադասություն:</li> <li>4. Մեկնաբանի գրական տեքստերում հանդիպող երկխոսություններն ու մենախոսությունները:</li> <li>5. Կետադրի ուղղակի և անուղղակի խոսքը:</li> <li>6. Գրի մենախոսություն և երկխոսություն:</li> <li>7. Տարբեր ոճերով երկխոսությունների վարի:</li> <li>8. Յարգեր ձևակերպի և հարցազրույց վարի :</li> </ol>	
<b>Բովանդակություն</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Մեջբերվող խոսք: Ուղղակի և անուղղակի խոսք: (4)</li> <li>2. Ուղղակի խոսք: Կետադրությունը: (4)</li> <li>3. Անուղղակի խոսք: Կետադրությունը: (3)</li> <li>4. Երկխոսություն: Կետադրությունը: (4)</li> <li>5. Երկխոսությունը առօրյա խոսքում: (3)</li> <li>6. Երկխոսությունը գեղարվեստական գրականության մեջ: (2)</li> <li>7. Երկխոսությունը մասնագիտական բնագավառում: (2)</li> <li>8. Մենախոսություն: (2)</li> </ol>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Տրված բառերով գրել մենախոսություն, վերնագրել:</li> <li>• Կազմել և վարել տարբեր ոլորտներին առնչվող երկխոսություններ:</li> <li>• Ուրիշի խոսքը վերածել անուղղակիի և հակառակը:</li> <li>• Ավարտել միտքը՝ լրացնելով խոսակցի, հեղինակի խոսքերը:</li> <li>• Վերլուծել տարբեր տեքստեր՝ առանձնացնելով ուրիշի խոսքերը:</li> <li>• Ըստ արտահայտած խոսքի՝ բնութագրել մարդուն, գրական հերոսին:</li> <li>• Փոխադրել տեքստը պահանջվող տեսակի նախադասություններով:</li> <li>• Արտահայտել վերաբերմունք՝ կիրառելով տարբեր բնույթի նախադասություններ:</li> <li>• Ստեղծել միակողմանի երկխոսություն:</li> <li>• Քննել, վերլուծել արձակ և չափածո տեքստերում հանդիպած երկխոսություններն ու մենախոսությունները:</li> <li>• Որպես թանգարանի աշխատակից՝ ընկերներին պատմել տվյալ թանգարանում ցուցադրվող նմուշների մասին:</li> <li>• Համեմատել հայերենի և օտար լեզուներից որևէ մեկի մեջբերվող խոսքի քերականական նմանությունները և տարբերությունները:</li> <li>• Կատարել թարգմանություն օտար լեզվից հայերեն և հայերենից օտար լեզու. ցույց տալ մեջբերվող խոսքի առանձնահատկությունները:</li> </ul>	<p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Երկխոսությունների և մենախոսությունների ձևավորման կայուն կառուցվածք և հնարավոր բովանդակային փոփոխություններ:</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b> Մեջբերվող խոսքի ձևավորման պատճառահետևանքային կապերի ազդեցությունը խոսքի վրա:</p> <p><b>Ժամանակ և տարածություն:</b> Ժամանակի և տարածության ներգործությունը խոսքի ձևավորման վրա:</p> <p><b>Անհատ և հարաբերություններ:</b> Խոսքի արժեքը՝ կախված անհատական և հասարակական հարաբերություններից:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Պատմություն, աշխարհագրություն:</b> Ուրիշի խոսքի վերածում անուղղակիի կամ հակառակը, դերախաղով համապատասխան մթնոլորտի ստեղծում, հարց ու պատասխանի միջոցով աշխարհագրական տարածքների կամ պատմական իրադարձությունների ներկայացում:</p> <p><b>Գրականություն, արվեստ:</b> Հանդիպած երկխոսությունների ու մենախոսությունների վերարտադրություն կամ վերլուծություն, ստեղծում, բնույթի որոշում:</p> <p><b>Հասարակագիտություն:</b> Արվեստ: Յարգերի առաջադրում, հարցազրույցների վարում:</p>	
<b>Կապը Հանրակրթության Չափորոշչի հիմնական դպրոցի վերջնադրույունների հետ</b>	
II-9-Յ1, Յ2, Յ16, Յ23, Յ25, Յ26, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ37, Յ42, Յ44, Յ45, Յ46	

## 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Շաբաթական 2 դասաժամ, տարեկան 68 դասաժամ

<b>ԹԵՄԱ</b>
<b>ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b> (18 դ/ժամ)
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>
<p><u>Համակարգել</u> գիտելիքները ուղղագրության վերաբերյալ:</p> <p><u>Տիրապետել</u> գրավոր և բանավոր գրագետ խոսքին:</p> <p><u>Ընդլայնել</u> գիտելիքները ուղղագրական առավել բարդ իրողությունների շուրջ:</p>
<b>ԿԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>

1. *Գրի* գրագետ, առանց ուղղագրական սխալների:
2. *Խոսի* գրագետ՝ պահպանելով ուղղախոսության կանոնները:
3. *Հասկանա* ուղղագրության կանոնները/սկզբունքները:
4. *Կիրառի* ուղղագրության կանոնները/սկզբունքները գրավոր խոսքում:
5. *Տարբերի* ուղղագրական սխալները վրիպակներից և *ուղղի* դրանք:
6. *Գրի* արագ՝ թույլ չտալով ուղղագրական սխալներ:
7. Տեքստում *գտնի* և *ուղղի* ուղղագրական սխալները:
8. *Խմբագրի* տեքստեր համակարգչով:

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Ձայնավորների ուղղագրությունը
2. Երկինջյունների և յ ձայնակապի ուղղագրությունը
3. Եռաշարք բաղաձայնների ուղղագրությունը
4. Երկշարք բաղաձայնների և մյուս բաղաձայնների ուղղագրությունը
5. Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը
6. Բաղադրյալ բառերի ուղղագրությունը
7. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
---------------------------------------	--

- |  |   |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կազմել</i> ուղղագրական, բացատրական երկլեզու կամ եռլեզու բառաշարքեր, դրանք տրամադրել դասընկերներին կամ կրտսեր ընկերներին:</li> <li>2. <i>Լրացնել</i> բաց թողած տառերը տրված տեքստում, դրանք փոխարինել հոմանիշներով, գտնել և գրել դրանց հականիշները:</li> <li>3. <i>Հարստացնել</i> տեքստը ուղղագրական արժեք ներկայացնող բառերով: Ստուգաբանական և բառակազմական բառարաններով <i>բացատրել</i> դրանց կազմությունը, ներկայացնել լսարանին:</li> <li>4. <i>Կազմել և ձևավորել</i> ուղղագրական թռուցիկներ, բացիկներ, տարածել կրթարանում կամ համայնքում:</li> <li>5. <i>Էլեկտրոնային միջոցներով</i> կազմել ուղղագրական, ուղղախոսական, բառակազմական առաջադրանքներ կրտսեր դասընկերների գործածության համար:</li> <li>6. <i>Կազմել</i> նախադասություններ կամ զվարճալի տեքստեր երկինջյուններ ունեցող զուգածություններով (Ասիա-Ասյա, Վիկտորիա- Վիկտորյա և այլն), կրկնակ բաղաձայն ունեցող բառերով ( մրմռալ- մռմռալ, թրթռալ-թռվռալ, գրգռել-գռգռալ և այլն):</li> <li>7. <i>Կազմել</i> շուտասելուկներ տարբեր ուղղագրական արժեք ունեցող բառերով (կափկափել- կապկապել, մրմռալ-մռմռալ և այլն):</li> <li>8. <i>Սրբագրել</i> տրված տեքստը՝ բառակազմական և ստուգաբանական վերլուծություններով բացատրելով սխալները:</li> <li>9. <i>Յորիներ</i> երկխոսություն, մենախոսություն տրված բառերով՝ տրված թեմային համապատասխան:</li> <li>10. <i>Ստեղծել</i> գովազդային տեքստ ուղղագրական արժեք ունեցող բառերի օգնությամբ. ստեղծել բառախաղով գովազդային տեքստ:</li> </ol> | <p><b>Օրինաչափություն:</b><br/>Կանոնակարգված օրինաչափությունների դրսևորումը բառերի գրության և արտասա նության մեջ:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ:</b><br/>Բառերի կազմության ազդեցությունը դրանց ուղղագրության և ուղղախոսության վրա:</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b><br/>Պատճառահետևանքային կապերը բառերի գրության և արտասանության ժամանակ:</p> |
|--|---|

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Գրական տեքստերում ուղղագրական դժվարություն ունեցող բառերի կիրառում ու դրանց ոճական նշանակության կարևորում: Գրական խոսքի կառուցում ուղղագրական արժեք ունեցող բառերի կիրառությամբ:

**Բնագիտականաբանական և տեխնիկական առարկաներ:** Ոչ գրական տեքստերում ուղղագրական դժվարություն ունեցող բառերի անկայությունը, օտար տերմինների տառադարձում, կիրառում մասնագիտական տեքստերում: Տերմինաբանական բառարանների կիրառումը մասնագիտական տեքստեր հասկանալու, վերարտադրելու կամ կազմելու ընթացքում:

**Օտար լեզուներ:** Հայերենի և օտար լեզուների ուղղագրական կանոնների տարբերություններ. օրինաչափաւությունների բացահայտում, նմանությունների և տարբերությունների վերհանում:

**Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ**

II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

**ԹԵՄԱ**

**ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
(12 դ/ժամ)

**ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

*Համակարգել* կետադրության վերաբերյալ գիտելիքները:  
*Ձևավորել* գիտելիք կետադրական առավել բարդ կիրառությունների վերաբերյալ:  
*Կետադրել* տարբեր բարդության տեքստեր:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. Կետադրել պարզ և բարդ նախադասությունները:
2. Կետադրել նախադասությունները՝ ելնելով նախադասության անդամների տեսակից և դիրքից:
3. Կետադրել նախադասությունները՝ ըստ հաղորդակցման եղանակի:
4. Բանավոր խոսքը՝ երկխոսությունը, մենախոսությունը, *դարձնել* գրավոր՝ կետադրելով այն:
5. *Բերել* կետադրությամբ հարուստ գրական օրինակներ:
6. *Ձևակոխել* տեքստը՝ ավելացնելով կամ պակասեցնելով կետադրական նշանները:
7. *Գրել* կետադրությամբ հարուստ թելադրություն:
8. *Բերել* տարբեր ոճերի տեքստերին բնորոշ կետադրությամբ հարուստ օրինակներ:
9. Կետադրել համր բնագրերը:
9. *Կազմել* կետադրությամբ հարուստ տեքստեր:
10. Կետադրել բարդ տեքստեր *և մեկնաբանել* կիրառվող կետադրական կանոնները:

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Կետադրություն. ընդհանուր բնութագիր
- Նախադասության բազմակի անդամների կետադրությունը
- Նախադասության գոյականական անդամների կետադրությունը
- Նախադասության բայական անդամների կետադրությունը
- Դերբայական դարձվածի կետադրությունը
- Նախադասության զեղչված անդամների կետադրությունը
- Մեջբերվող խոսքի կետադրությունը
- Կետադրական կանոնների հանդիպադրում

<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
---------------------------------------	--

<ol style="list-style-type: none"> <li>1. Ինքնուրույնաբար աշխատել մոդուլներով, յուրացնել և կիրառել կետադրական նշանները գրավոր խոսքում:</li> <li>2. <i>Կետադրել</i> համր բնագրերը, բացատրել յուրաքանչյուր նշանի քերականական արժեքը:</li> <li>3. <i>Չարտացոլել</i> տեքստը գոյականական անդամի լրացումներով, բազմակի անդամներով և կետադրել:</li> <li>4. <i>Չարտացոլել</i> տեքստը դերբայական դարձվածներով և կետադրել, <i>կատարել</i> դերբայական դարձվածի տեղաշարժ նախադասության մեջ՝ համապատասխանաբար կետադրելով նախադասությունը:</li> <li>5. Պարզ նախադասություններով տեքստը <i>դարձնել</i> բարդ նախադասություններով տեքստ և <i>կետադրել</i>:</li> <li>6. <i>Ստեղծել</i> տարբեր ոճերի տեքստեր և կետադրել, բացատրել խոսքի ոճերի առանձնահատկությունները՝ ելնելով կիրառված կետադրական նշաններից:</li> <li>7. <i>Կետադրել</i> տեքստը՝ պահպանելով և բացատրելով կետադրական հանդիպադրման դեպքերի կանոնները:</li> <li>8. <i>Սրբագրել</i> տրված տեքստը, բացատրել սխալները ըստ քերականական կանոնների:</li> <li>9. <i>Կազմակերպել և ներկայացնել</i> դերախաղ «Կետադրական նշանների դերը խոսքում» թեմայով:</li> <li>10. <i>Գրել</i> հետազոտական աշխատանք կետադրության շուրջ:</li> </ol>	<p><b>Օրինաչափություն:</b> Կետադրության միջոցով կանոնա կարգված օրինաչափությունների արտահայտումը խոսքում:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Լեզվական-քերականական, համակարգերի գործունեությունը՝ մասերի փոխադարձ կապերով պայմանավորված:</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b> Կետադրության միջոցով պատճառահետևանքային կապերի բացահայտումը և ամրապնդումը խոսքում:</p>
---	---

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն:** Կետադրության դերի կարևորումը գրական ստեղծագործության ստեղծման, ընթերցման, ընկալման, վերարտադրության մեջ:

**Բնագիտամաթեմատիկական առարկաներ:** Կետադրության առանձնահատկությունների վերհանում գիտական տեքստերի մեկնաբանության ժամանակ: Տեքստերի բովանդակության փոխանցում ճիշտ կետադրության միջոցով:

**Հասարակագիտություն:** Գործնական գրություններում և թղթաբանության մեջ կետադրության կարևորում և կիրառում:

**Օտար լեզուներ:** Օտար լեզուներում կիրառվող կետադրություն. նմանությունների և տարբերությունների վերհանում:

**Արվեստ:** Կետադրության միջոցով բանավոր խոսքի ձևավորում. բեմական արտահայտիչ խոսք:

**Ֆիզիկական կուլտուրա:** Ճիշտ և կանոնավոր շնչառության կիրառում կետադրությամբ հարուստ տեքստերի ընթերցման ժամանակ:

**Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ**

II-9-Ս1, Ս11, Ս14, Ս15, Ս24, Ս25, Ս26, Ս28, Ս33, Ս40, Ս41, Ս42

**ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Հասկանա բառերի կազմության եղանակներն ու օրինաչափությունները՝ որպես բառապաշարի հարստացման կարևոր միջոց:  
Կիրառի կազմությամբ տարբեր տեսակի բառերը խոսքում:  
Չնահատի բառակազմությունը՝ որպես բառերի ստեղծման գործուն եղանակ:

**ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

1. *Տարբերի* բառակազմության երեք եղանակները:
2. Տեքստում *գտնի* տարբեր կազմություններ ունեցող բառեր, *մատնանշի* բառակազմական տեսակը:
3. *Կազմի* բառեր տրված ածանցներով:
4. *Տարբերակի* բարդ բառերը ածանցավորներից:
5. *Կազմի* բառային հոմանիշներ (ածանցավոր և բարդ ձևեր):
6. *Հասկանա* հապավումները և ներկայացնի դրանց ամբողջական տարբերակները:
7. *Կազմի* նոր հապավումներ:
8. *Թարգմանի* օտարաբանությունները՝ օգտագործելով բառակազմական երեք եղանակները:
9. Անսխալ *գրի* բարդ բառերը և հապավումները:

**Բովանդակություն**

- Բառակազմություն. ածանցում
- Բառաբարդում. կրկնություն, հարադրում
- Հապավում

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. *Ցույց տալ* տեքստում ածանցավոր բառերը, *որոշել* դրանց տեսակը ըստ բառի մեջ գրաված դիրքի:
2. *Կազմել* ածանցավոր բառեր՝ ըստ խոսքիմասային նշանակության:
3. *Կազմել* բարդ բառեր՝ տրված բառաշարքերով, *բացատրել* կազմված բարդ բառերի տեսակը:
4. Օգտվելով բառարաններից՝ տեղեկատվական տեքստը *հարստացնել* բաղադրյալ բառերով:
5. *Կատարել* տրված բառերի բառակազմական վերլուծություն (ըստ անհրաժեշտության օգտվելով բառակազմական բառարաններից). *գտնել* և *մատնանշել* գրաբարի ազդեցությունը այդ բառերի կազմության վրա:
6. *Գրել* թելադրություն՝ հարուստ բաղադրյալ բառերով:
7. Բարդ բառերով *կազմել* երկխոսություն, դրանք *փոխարինել* բառակապակցություններով:
8. Կատարելով փոքրիկ ուսումնասիրություն շրջապատող միջավայրում՝ *թվարկել* առավել տարածված հապավումները, *բացատրել* դրանց նշանակությունը:
9. *Թարգմանել* օտար հապավումները, ցույց տալ հայերենում դրանց համարժեք հապավումները:
10. *Մեկնաբանել* տարբեր պետական նշանակության հապավումները:
11. *Ստեղծել* գրական տեքստ՝ կիրառելով կրկնավոր և հարադիր բարդություններ:
12. *Ստեղծել* ծավալուն խոսք՝ լայնորեն կիրառելով ածանցավոր և բարդ բառեր:

**Օրինաչափություն:**  
Օրինաչափությունների առկայությունը բառակազմության բոլոր տեսակներում:

**Կայունություն և փոփոխություն:**  
Բառակազմական մոտեցումների համեմատաբար անփոփոխ կայունությունը և փոփոխությունները ժամանակի ընթացքում:

**Կառուցվածք և գործառույթ:**  
Լեզվական-քերականական, իրողությունների փոխադարձ կապեր: Բառը՝ որպես կառուցվածք, դրանից բխող գործառույթներ:

**Միջառարկայական կապեր**

**Հասարակագիտություն ( քաղաքագիտություն.. իրավագիտություն)** Պետական կառավարման համակարգում և թղթաբանության մեջ հապավումների կիրառում:  
**Օտար լեզուներ.** Բառակազմությունը օտար լեզուներում, բաղադրյալ բառերի թարգմանություն բառակազմական կանոնների համապատասխան:  
**Բնագիտամաթեմատիկական առարկաներ:** Տերմինաբանությունը՝ որպես գիտության լեզու: Մասնագիտական բառերի լայն կիրառում, դրանց ստեղծման ուղիների վերհանում:  
**Տեղեկատվական տեխնոլոգիաներ:** Նոր տերմինների թարգմանություն կամ փոխառում, դրանց կիրառում նեղ մասնագիտական ոլորտում, ինչպես նաև համագործածական բառապաշարում:  
**Գրականություն:** Կրկնավոր բարդությունների կիրառությունը և դերը չափածո խոսքում:

**Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ**

**Թեմա**

**ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՊԵՐՏԵՐ**  
(8 դ/ժամ)

**ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Իմանալ և տարբերակել բառապաշարի շերտերն ըստ ոճաբանական առանձնահատկությունների:  
Ըմբռնել բառապաշարի շերտերի կիրառության սահմանները ըստ ոճերի:  
Արժևորել բառապաշարի շերտերի բազմազանությունը խոսքում:

**ՎԵՐՋՆԱՐՅՈՒՆՔՆԵՐ**

1. *Տարբերի* բառապաշարի շերտերն ըստ արտահայտած ոճական նշանակության:
2. *Առանձնացնի և կիրառի* բառապաշարի տարբեր շերտերն ըստ թեմայի բովանդակության:
3. *Հասկանա* տարբեր ոճերով շարադրված տեքստերը, *վերաշարադրի, վերապատմի, փոփոխի*:
4. *Հարստացնի* տեքստը բառապաշարի այնպիսի շերտով, որի հետևանքով փոխվի տեքստի ոճական նկարագիրը:
5. *Կազմի* տարբեր ոճերի տեքստեր՝ կիրառելով համապատասխան բառապաշար:
6. *Թարգմանի* կամ *փոխադրի* տեխնիկական նշանակության տեքստեր:
7. *Կիրառի* նորաստեղծ բառեր տարբեր ոճերի տեքստերում:
8. *Կիրառի* մեղիա դաշտին բնորոշ բառեր և արտահայտություններ որոշակի տեղեկույթ փոխանցելու նպատակով:
9. *Հարստացնի* տեքստը դարձվածքներով:
10. *Կառուցի* դարձվածքներով հարուստ խոսք:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- Բառապաշարի ոճաբանական դասակարգումը
- Համագործածական և մասնագիտական բառեր
- Հնաբանություններ և նորաբանություններ
- Փոխառություններ և օտարաբանություններ
- Հայերենի դարձվածքները. դրանց ոճական արժեքը

**Առաջարկվող գործունեության ձևեր**

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**

1. Գտնել և դասակարգել տրված տեքստում որոշակի ոճական երանգավորում ունեցող բառերը:
2. Հարստացնել տեքստը տարբեր ոճերին բնորոշ բառերով:
3. Օգտվելով բացատրական բառարաններից՝ գրել պատմական ակնարկ՝ կիրառելով հնաբանություններ:
4. Շարադրել տեղեկատվական նյութ՝ կիրառելով նորաբանություններ:
5. Գրել հայտարարություն տեխնիկայի առուվաճառքով զբաղվող կենտրոնի տեսականու վերաբերյալ:
5. Ստեղծել գովազդ՝ կիրառելով փոխառություններ և օտարաբանություններ:
6. Կազմել խոսք տերմինների միջազգային և հայերեն համարժեքներով (գտնել, փոխադրել):
7. Ստեղծել երկխոսություն բառապաշարի տարբեր շերտերով, ներկայացնել երկխոսությունը:
8. Կազմել երկխոսություն՝ կիրառելով դարձվածքներ:
9. Ստեղծել գրական-երաժշտական միջոցառման բեմագիր (սցենար)՝ կիրառելով նորաբանություններ և հնաբանություններ:
11. Կազմել շուտասելուկներ դարձվածքներով, դրանք փոխարինել ոչ կայուն բառակապակցություններով կամ բառերով:
12. Շարադրել գրական ոչ ծավալուն տեքստեր տրված դարձվածքներով, վերնագրել տեքստերը դարձվածքով:
13. Ստեղծել ծավալուն և ոչ ծավալուն խոսք տարբեր ոճերի բառերով:

**Օրինաչափություն:**  
Բառապաշարի շերտերում գոյություն ունեցող օրինաչափություններ. դասակարգում. նմանությունների ու տարբերությունների բացահայտում:

**Կայունություն և փոփոխություն:**  
Համեմատաբար կայուն միջոցները և ուղիները բառապաշարի հարստացման գործում, ժամանակի ընթացքում նոր ուղիների առաջացում, փոփոխությունների դրսևորում:

**Կառուցվածք և գործառույթ:**  
Բառերի բառակազմական առանձնահատկությունները՝ ելնելով խոսքում դրանց ոճական կիրառությունից:

**Միջառարկայական կապեր**

**Գիտությունների բոլոր ճյուղեր:** Մասնագիտական բառապաշարի կիրառում մասնագիտական տեքստեր շարադրելիս, դրանք ըմբռնելու մատչելիությունը:

**Տեխնիկական գիտություններ. ինֆորմատիկա:** Փոխառությունների և օտարաբանությունների կիրառում տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում:

**Պատմություն.** Հնաբանությունների կիրառում պատմական դեպքերը նկարագրելիս, պատմական տեքստերի կազմում հնաբանությունների միջոցով:

Հին Հունաստանի և Հին Հռոմի առասպելներն ու լեգենդները՝ որպես թևավոր խոսքերի՝ կայուն բառակապակցությունների առաջացման աղբյուրներ:

**Օտար լեզուներ.** Օտարաբանությունների/տերմինների թարգմանություն: Օտար լեզուներում կիրառվող դարձվածքներ, դրանց համարժեքները հայերենում և հակառակը:



**Գրականություն:** Պատմական վեպերում հնաբանությունների կիրառում, դրանց դերի և նշանակության բացահայտում:  
Դարձվածքի միջոցով գրական երկերում ոճական երանգավորման ապահովում և դրանցով պատկերավոր մտածողության զարգացում.  
դարձվածքների դերի կարևորում գրական տեքստում համապատասխան միջավայր ստեղծելու գործում:

**Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադրյունների հետ**

II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

<b>Թեմա</b>	
<b>ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ ԵՎ ՁԵՎԻ ԱՈՒՂՈՒԹՅԱՆ (6 Դ/ԺԱՄ)</b>	
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>	
<u>Տարբերակել</u> բառերն ըստ իմաստի և ձևի առնչության: <u>Կիրառել</u> բառերի ձևաիմաստային տեսակները խոսքում: <u>Հասկանալ և արժևորել</u> բառերի իմաստաձևային խմբերի կարևորությունը բառապաշարի հարստացման գործում:	
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"><li>1. <i>Տարբերակել</i> բառերը ըստ արտահայտած իմաստի և ձևի:</li><li>2. <i>Առանձնացնել</i> բառերի խմբերն ըստ արտահայտած իմաստի՝ հոմանիշներ, հակահիշներ, հարանուններ:</li><li>3. <i>Առանձնացնել</i> բառերի խմբերն ըստ ձևի. համանուններ:</li><li>4. <i>Կազմի</i> տարբեր ոճերի տեքստեր՝ կիրառելով համանուններ և հարանուններ:</li><li>5. <i>Հարստացնել</i> տարբեր ոճերի տեքստերը հարանուններով, հոմանիշներով:</li><li>6. Ճիշտ <i>կիրառի</i> հարանուն բառերը համապատասխան տեքստում:</li><li>7. <i>Կիրառի</i> համանունները և հարանունները խոսքային համապատասխան միջավայրում:</li><li>8. <i>Կազմի</i> կապակցված խոսք բառերի տրված հոմանիշներով և հակահիշներով:</li></ol>	
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<ul style="list-style-type: none"><li>• Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի առնչության</li><li>• Հոմանիշություն և հակահիշություն</li><li>• Համանուններ</li><li>• Հարանուններ</li></ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"><li>1. <i>Գտնել և դասակարգել</i> տրված տեքստում կիրառված հոմանիշները և հակահիշները:</li><li>2. Հոմանիշային բառարանի օգնությամբ <i>փոխարինել</i> տեքստի նշված բառերը հոմանիշներով:</li><li>3. <i>Ստեղծել</i> հոմանիշային և հակահիշային բառարաններ:</li><li>4. <i>Կազմել</i> վարչական բովանդակության տեքստ տրված հարանուններով:</li><li>5. <i>Ճարտարել</i> տեղեկատվական նյութ՝ կիրառելով հարանուններ:</li><li>6. <i>Ստեղծել</i> գովազդ՝ կիրառելով հոմանիշներ և հակահիշներ:</li><li>7. <i>Ստեղծել և ներկայացնել</i> երկխոսություն համանուններով:</li><li>8. <i>Կազմել</i> շուտասելուկներ, հանելուկներ համանուններով և հարանուններով:</li><li>9. <i>Ճարտարել</i> ակնարկ, նովել, պատմվածք տրված հոմանիշներով և հակահիշներով:</li><li>10. <i>Թարգմանել</i> փոքրիկ տեքստեր, որոնք հարուստ են համանուններով և հարանուններով:</li><li>11. <i>Ներկայացնել</i> արվեստի սիրելի գործը՝ կտավը, քանդակը, կառույցը և այլն՝ կիրառելով հոմանիշներ և հակահիշներ:</li><li>12. Վերարտադրել գրական երկը, կարդացած կամ լսած տեքստը համապատասխան նկարների, մեղեդիների, քանդակների, կիրառական արվեստի նմուշների օգնությամբ՝ հոմանիշները փոխարինելով գույներով, նոտաներով և այլն:</li><li>13. <i>Կազմել</i> գրական ծավալուն խոսք բառերի ձևաիմաստային խմբերով:</li></ol>	<b>Օրինաչափություն:</b> Բառերի դասակարգման մոտեցումները ըստ ձևի և իմաստի. նմանությունների ու տարբերությունների բացահայտում:  <b>Կայունություն և փոփոխություն:</b> Բառերի ձևաիմաստային խմբերի համեմատաբար կայունությունը և ժամանակի հրամակայանով դրանց փոփոխությունների բնականոն ընթացքը:
<b>Միջառարկայական կապեր</b>	
<b>Գրականություն:</b> Պատկերավոր խոսքի կազմում բառերի ձևաիմաստային խմբերի լայն կիրառմամբ. շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, քառյակներ: Չափածո և արձակ խոսքում բառերի ձևաիմաստային խմբերի լայն կիրառում: <b>Հասարակագիտություն:</b> Հարանունների կիրառությունը իրավաբանության մեջ. հարանունների առկայությունը գործնական գրություններում: <b>Օտար լեզուներ.</b> Ձևաիմաստային տարբեր խմբերին պատկանող բառերի թարգմանում. տարբեր լեզուներում օրինաչափությունների կիրառում թարգմանություններ կատարելիս:	

<b>Արվեստ:</b> Արվեստի գործերի բառային նկարագրություն հոմանիշների և հակահիշների լայն կիրառությամբ:
<b>Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադրյունների հետ</b>
II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

<b>Թեմա</b>	
<b>ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b> (4 դ/ժամ)	
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>	
<p><u>Իմանալ և տարբերակել</u> բառարանների տեսակները:  <u>Օգտվել</u> տարբեր բառարաններից:  <u>Արժևորել</u> բառարանների դերը բառարապաշարի հարստացման գործում:</p>	
<b>ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Իմանալ</i> բառարանների տեսակները:</li> <li>2. <i>Ըմբռնի</i> բառարան կազմելու հիմնական սկզբունքները:</li> <li>3. Ըստ անհրաժեշտության <i>կիրառի</i> բառարանների տարբեր տեսակներ:</li> <li>3. <i>Կազմի</i> փոքր ծավալի բացատրական բառարան:</li> <li>4. <i>Կազմի</i> տրված բառերի հոմանիշների բառարան:</li> <li>5. <i>Կիրառի</i> առցանց բառարաններ:</li> <li>6. <i>Կիրառի</i> թարգմանական բառարաններ տեքստեր թարգմանելիս:</li> </ol>	
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Բառարանագրություն. բառարանների տեսակները</li> <li>• Բառարանների տեսակները և դրանցից օգտվելու կանոնները</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Օգտվելով բացատրական բառարաններից՝ <i>դուրս գրել</i> տրված բառերի բացատրությունները:</li> <li>2. Տրված բառերը դասավորելով այբբենական հերթականությամբ՝ <i>կազմել</i> փոքրածավալ բառարաններ:</li> <li>3. <i>Հարստացնել</i> տեքստը հոմանշային բառարաններից դուրս գրված բառերով:</li> <li>4. Դարձվածաբանական բառարաններից <i>դուրս գրել</i> տրված բառերի համապատասխան դարձվածքները:</li> <li>5. <i>Կատարել</i> տեքստից դուրս գրված բառերի ստուգաբանական վերլուծություն՝ օգտվելով ստուգաբանական բառարաններից:</li> <li>5. <i>Կատարել</i> օտարալեզու տեքստի թարգմանություն՝ օգտվելով թարգմանական բառարաններից:</li> <li>6. Տրված տեքստը <i>հարստացնել</i> բառարաններից դուրս գրված դարձվածքներով:</li> <li>7. <i>Կազմել</i> գրական երկի հոմանիշների փոքրիկ բառարան:</li> <li>8. <i>Կազմել</i> մասնագիտական բառերի բացատրական բառարան:</li> </ol>	<p><b>Օրինաչափություն:</b>  Բառարաններ կազմելու կայուն կանոններ. բառաշարքերի ստեղծում ըստ այբբենական կարգի. դրանք օգտագործելու կանոնների կարևորությունը:</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b>  Պատճառահետևանքային կապերի կարևորումը բառերի, բառակապակցությունների բացատրությունը փոխանցելիս:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն:</b>  Բառերի մեկնաբանությունների, դրանց իմաստների կայունությունը որոշակի ժամանակաընթացքում և փոփոխությունների ենթարկվելու բնականոն գործընթացները:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գիտությունների բոլոր ճյուղեր:</b> Մասնագիտական բառապաշարի համար նախատեսված բառարանները մասնագիտական աշխարհում. տերմինների բացատրություն համապատասխան բառարանների միջոցով:</p> <p><b>Տեխնիկական գիտություններ. ինֆորմատիկա:</b> Օտարալեզու տերմինների թարգմանություն բառարանների օգնությամբ: Նորաստեղծ տերմինների և դրանց բացատրությունների զետեղումը տարբեր բառարաններում:</p> <p><b>Օտար լեզուներ.</b> Օտարալեզու տեքստերի թարգմանում: Թարգմանական բառարանների կիրառում թարգմանություններ կատարելիս:</p> <p><b>Գրականություն:</b> Բառարանների կարևորությունը լեզվի հարստացման և գրական տեքստեր կազմելու գործընթացում: Հոմանշային և հականշային բառարանների դերի ընդգծում պատկերավոր խոսք կազմելիս:</p>	
<b>Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադրյունների հետ</b>	
II 9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42	

<b>Թեմա</b>	
<b>ՈՃԵՐ</b> (10-րդ դասարան – 6 դ/ժամ, 11-րդ դասարան-6 դ/ժամ, 12-րդ դասարան-10 դ/ժամ)	
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>	
<p><u>Կառուցել</u> տարբեր ոճերով գրավոր և բանավոր կապակցված խոսք:  <u>Կիրառել</u> ոճերը համապատասխան միջավայրում:  <u>Գնահատել</u> ոճերի բազմազանության կարևորությունը խոսք կառուցելիս:</p>	
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տարբերակի</i> գործառական ոճերի տեսակները:</li> <li>2. <i>Կիրառի</i> համապատասխան միջավայրում համապատասխան ոճ:</li> <li>3. <i>Կառուցի</i> տարբեր ոճերի տեքստեր՝ կիրառելով համապատասխան ոճական իրողություններ:</li> <li>4. <i>Կիրառի</i> առօրյա-խոսակցական ոճը ոչ պաշտոնական միջավայրում:</li> <li>5. <i>Ելույթ ունենալ</i> կիրառելով հրապարակախոսական ոճին բնորոշ լեզվական միջոցներ:</li> <li>6. <i>Կառուցի</i> առօրյա-խոսակցական և հրապարակախոսական ոճերի կիրառմամբ ծավալուն խոսք:</li> <li>7. <i>Ստեղծի</i> գրական տեքստ՝ օգտագործելով գեղարվեստական ոճին բնորոշ առանձնահատկություններ:</li> <li>8. <i>Կառուցի</i> գիտական տեքստեր՝ կիրառելով համապատասխան լեզվական իրողություններ:</li> <li>9. <i>Կառուցի</i> գիտական տեքստ՝ պահպանելով կառուցվածքային առանձնահատկությունները:</li> <li>10. <i>Տիրապետի</i> վարչական ոճին բնորոշ բառապաշարին, քերականական առանձնահատկություններին և <i>կիրառի</i> խոսքում:</li> <li>11. <i>Հարստացնի</i> տեքստը գիտական և վարչական տերմիններով/մասնագիտական բառերով և արտահայտություններով:</li> <li>11. <i>Կառուցի</i> տարբեր բնագավառների ծավալուն խոսք՝ կիրառելով տերմիններ և մասնագիտական բառեր:</li> <li>12. <i>Ստեղծի</i> տեքստ խառը ոճերով:</li> </ol>	
<b>ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<p>10-րդ դասարան</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գործառական ոճեր, դրանց տեսակները</li> <li>• Առօրյա-խոսակցական ոճ</li> <li>• Հրապարակախոսական ոճ</li> </ul> <p>11-րդ դասարան</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գեղարվեստական ոճ</li> <li>• Վարչական ոճ</li> </ul> <p>12-րդ դասարան</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գիտական ոճի նկարագիրը</li> <li>• Գիտական ոճի կառուցվածքն ու բառապաշարը, քերականական հատկանիշները</li> <li>• Խոսքի ոճեր (գրողի, անհատական և իրադրական)</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված տեքստում <i>ցույց տալ</i> առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառային, դարձվածային և քերականական իրողություններ:</li> <li>2. Տրված տեքստում <i>գտնել</i> հրապարակախոսական ոճին բնորոշ բառային, դարձվածային և քերականական իրողություններ:</li> <li>3. Կարդացած գրականությունից <i>բերել</i> առօրյա-խոսակցական ոճին բնորոշ օրինակներ, դրանք <i>ներկայացնել</i> երկխոսությամբ:</li> <li>4. <i>Շարադրել</i> հրապարակախոսական ոճով խոսք հանրային հնչեղություն ունեցող թեմայով:</li> <li>5. <i>Գրել</i> որևէ մրցույթում հաղթող մասնակցի ելույթը և <i>ներկայացնել</i>:</li> <li>6. <i>Կազմակերպել</i> բանավեճ՝ կիրառելով հրապարակախոսական ոճին բնորոշ իրողություններ:</li> <li>7. <i>Կազմել</i> երկխոսություններ՝ կիրառելով առօրյա-խոսակցական ոճին բնորոշ լեզվական միջոցներ:</li> <li>8. <i>Կազմել և բեմականացնել</i> մենախոսություններ և երկխոսություններ՝ կիրառելով համապատասխան լեզվական միջոցներ:</li> <li>9. Գրավոր խոսքը ենթարկելով որոշակի փոփոխությունների՝ <i>դարձնել</i> առօրյա-խոսակցական ոճին բնորոշ տեքստ:</li> <li>10. <i>Փոխակերպել</i> նույն տեքստը խոսքի տարբեր ոճերով և <i>հարդրել</i> լսարանին:</li> <li>11. <i>Ստեղծել</i> ոչ ծավալուն երկ՝ պատմվածք, նովել, ակնարկ՝ կիրառելով տրված բառերը և արտահայտությունները:</li> <li>12. <i>Ստեղծել</i> գովազդ առօրյա-խոսակցական ոճով:</li> <li>13. <i>Գրել</i> զեկուցում հանձնարարված թեմայով:</li> <li>14. Տրված տեքստում <i>գտնել</i> գիտական ոճին բնորոշ բառային և քերականական իրողություններ:</li> <li>15. Տրված տեքստում <i>գտնել</i> վարչական ոճին բնորոշ բառային և քերականական իրողություններ:</li> <li>16. <i>Կազմել</i> գիտական ոճի տեքստ՝ ընտրելով սիրելի բնագիտական որևէ թեմա:</li> <li>17. <i>Համեմատել</i> տրված գիտական և գեղարվեստական ոճերով տեքստերը, <i>կշռել</i> տարբերությունները:</li> <li>18. <i>Կազմակերպել</i> դերախաղ «Դատական նիստ»՝ կիրառելով վարչական ոճին բնորոշ իրողություններ:</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b>  Խոսքի տրամաբանական կառուցվածքի ապահովումը միտքը ճիշտ փոխանցելու նպատակով:</p> <p><b>Պատճառ և հետևանք</b>  Խոսքում անհրաժեշտ պատճառահետևանքային կապերի ստեղծումը:</p> <p><b>Անհատ և հարաբերություններ:</b>  Տարբեր իրավիճակներ, մարդկային և հասարակական հարաբերություններ ներկայացնելիս յուրատեսակ խոսքի միջոցով վերաբերմունքի դրսևորում:</p>

<p>19. <i>Գրել</i> զեկույց կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ:</p> <p>20. Տրված բառերը <i>կիրառել</i> խոսքում որպես տերմիններ և որպես համագործածական բառեր:</p> <p>21. <i>ազմակերպել</i> փոքրիկ ելույթներ տարբեր բնագավառների տերմինների կիրառությամբ:</p> <p>22. Օգտագործելով միջազգային տերմիններ՝ <i>կառուցել</i> խոսք տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վերաբերյալ:</p> <p>23. Տրված տեքստերում <i>առանձնացնել</i> հեղինակներին բնորոշ ոճական առանձնահատկությունները:</p> <p>24. <i>Ստեղծել</i> երկխոսություն տվյալ իրադրությանը համապատասխան:</p> <p>25. <i>Յորիներ</i> տարբեր ժանրերով (հեքիաթ, առակ, պատմվածք, բանաստեղծություն) ստեղծագործություններ՝ կիրառելով գեղարվեստական ոճին բնորոշ առանձնահատկություններ:</p>	
--	--

**Միջառարկայական կապեր**

**Գրականություն.** Գրական ստեղծագործություններում լայնորեն կիրառվող առօրյա-խոսակցական և հրապարակախոսական ոճերին բնորոշ իրողություններ:

**Օտար լեզուներ.** Տարբեր լեզուներում կիրառվող ոճական առանձնահատկություններ: Տերմինների/մասնագիտական բառերի թարգմանություն: Թարգմանական առանձնահատկություններ:

**Հասարակագիտություն. իրավագիտություն.** Հրապարակախոսական ոճի կիրառում դատական նիստերում: Վարչական ոճը գործնական գրություններում:

**Բնագիտամաթեմատիկական առարկաներ:** Գիտության բոլոր բնագավառներում կիրառվող գիտական ոճի առանձնահատկությունները: Տերմինաբանության օգտագործում:

**Տեղեկատվական տեխնոլոգիաներ:** Օտարաբանությունների կիրառում այս ոլորտում, տերմինների թարգմանություն:

**Արվեստ:** Բեմական խոսքում տարբեր ոճերի ընտրություն և կիրառում:

**Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադյունքների հետ**

II 9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42

**Թեմա**

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
(10-րդ դասարան՝ 4 դ/ժամ, 11-րդ դասարան՝ 4 դ/ժամ, 12-րդ դասարան- 6 դ/ժամ)

**ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Հասկանալ գործնական գրությունների դերը գործնական հարաբերություններում:  
Կազմել գործնական գրություններ ըստ անհրաժեշտության:

**ՎԵՐՋՆԱՐՅՈՒՆՔՆԵՐ**

1. *Կազմի* տարաբնույթ գործնական գրություններ:
2. *Կազմի* գործնական գրություններ ըստ անհրաժեշտության:
3. *Կազմի* գործնական գրություններ՝ պահպանելով դրանք կազմելու սկզբունքները:
4. *Կիրառի* համապատասխան բառապաշար և քերականական առանձնահատկություններ գործնական գրություններ կազմելիս:
5. *Կազմի* դիմում/ տեղեկանք/ լիազորագիր:
6. *Գրի* ինքնակենսագրություն/CV:
7. *Գրի* անձնական/ պաշտոնական/ հիմնավորող նամակ:
8. *Ճարտդրի* բացատրագիր/ զեկուցագիր:
9. *Կազմի* արձանագրություն:
10. *Գրի* էլեկտրոնային նամակ, *որոշի* նամակի առարկան/վերնագիրը:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- 10-րդ դասարան*
- Գործնական գրություններ, դիմում
  - Ինքնակենսագրություն
  - Անձնական նամակ, էլեկտրոնային նամակ
  - Բացատրագիր
- 11-րդ դասարան*
- Տեղեկանք
  - Ստացական, լիազորագիր
  - Երաշխավորագիր
  - CV(ռեզյումե, կենսագրական տվյալների ամփոփագիր)
- 12-րդ դասարան*
- Արձանագրություն/քաղվածք
  - Պաշտոնական/ հիմնավորող նամակ

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Գրել</i> դիմում դպրոցի տնօրենին որոշակի հարցով:</li> <li>2. <i>Գրել</i> դիմում սպորտային կամ այլ տեսակի մրցումների մեկնելու թույլտվության համար:</li> <li>3. <i>Կազմել</i> ինքնակենսագրություն:</li> <li>4. <i>Գրել</i> էլեկտրոնային նամակ դպրոցական համայնքին որևէ հետաքրքիր առիթով:</li> <li>5. <i>Գրել</i> անձնական նամակ ընկերոջը/ազգականին:</li> <li>6. <i>Գրել</i> նամակ՝ պատմելով հետաքրքիր իրադարձության մասին:</li> <li>7. <i>Գրել</i> նամակ՝ զարմացնելով հասցեատիրոջը:</li> <li>8. <i>Գրել</i> նամակ՝ նկարագրելով կատարած կամավորական աշխատանքի մասին:</li> <li>9. <i>Ընթերցել</i> հայտնի մարդկանց նամակներից, <i>ներկայացնել</i> նամակի կառուցվածքը, <i>վեր հանել</i> անձնական նամակի առանձնահատկությունները:</li> <li>10. <i>Գրել</i> բացատրագիր դասերին կամ որևէ միջոցառման չմասնակցելու համար:</li> <li>11. <i>Մասնակցել</i> էլեկտրոնային փոխադարձ նամակագրությանը:</li> <li>12. <i>Գրել</i> տեղեկանք որևէ վայրում աշխատելու կամ սովորելու վերաբերյալ:</li> <li>13. <i>Կազմել</i> ստացական որևէ հաստատությունից իրեր կամ գումար ստանալու մասին:</li> <li>14. <i>Շարադրել</i> երաշխավորագիր դասընկերոջ մասին:</li> <li>15. <i>Գրել</i> լիազորագիր որոշակի իրավական գործողություններ կատարելու թույլտվության մասին:</li> <li>16. <i>Գրել</i> երաշխավորագիր ենթադրյալ աշխատողի կամ ուսանողի մասին:</li> <li>17. <i>Կազմել</i> սեփական CV-ն:</li> <li>18. Տրված ինքնակենսագրությունը <i>դարձնել</i> CV:</li> <li>19. <i>Կազմել</i> CV արտասահմանում ուսումնառելու, նոր աշխատանք գտնելու կամ որևէ մրցույթի մասնակցելու համար:</li> <li>20. <i>Գրել</i> պաշտոնական/հիմնավորող նամակ ըստ պահանջի:</li> <li>21. <i>Կազմել</i> որևէ ժողովի արձանագրություն և այդ արձանագրության քաղվածքը:</li> </ol>	<p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Կայունությունը՝ պաշտոնական գրություններում, դրանց կառուցվածքային համեմատաբար անփոփոխելիությունը որոշակի ժամանակահատվածում:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Կառուցվածքի կայունության և փոփոխության դրսևորումը խոսքային կաղապարներով ձևավորված տեքստերում. դրանց յուրահատուկ կառուցվածքով պայմանավորված գործառույթների բաշխումը:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Անձնական նամակներ պարունակող գրական տեքստերի կիրառում, դրանց կարևորումը գրական ստեղծագործության մեջ: Գրականության մեջ նամակ- վեպերի՝ որպես վեպի տարածված տեսակի առկայությունը:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Օտարալեզու անձնական նամակների թարգմանում: Հիմնավորող նամակներ կազմելիս օտար աղբյուրների օգտագործում:</p> <p><b>Հասարակագիտություն. իրավագիտություն, տնտեսագիտություն:</b> Գործնական գրությունները իրավաբանության մեջ, բանկային գործում:</p> <p><b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ:</b> Էլեկտրոնային տարածքի և էլեկտրոնային փոստի արդիականությունը ժամանակակից աշխարհում, պաշտոնական հարաբերություններում: Համապատասխան կանոնների առկայությունը, իմացությունը և պահպանումը էլեկտրոնային նամակներ գրելիս:</p>	
<b>Կապը Հանրակրթության չափորոշիչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42	

**11-րդ դասարան**

Շաբաթական 2 դասաժամ, տարեկան 68 դասաժամ

<b>Թեմա</b>	
<b>ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b> (26 դ/ժամ)	
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>	
<p><i>Իմանալ և տարբերակել</i> բառերն ըստ խոսքիմասային առանձնահատկությունների:  <i>Հասկանալ</i> բառերի ձևափոխությունների անհրաժեշտությունը խոսքում կիրառելու նպատակով:  <i>Կառուցել</i> խոսք բառերի ճիշտ ձևափոխություններով:</p>	
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տարբերակի</i> խոսքի մասերն ըստ իրենց արտահայտած իմաստի:</li> <li>2. <i>Առանձնացնի և կիրառի</i> բառերի ձևափոխված տարբերակները խոսքում:</li> <li>3. Կանոններին համապատասխան <i>ձևափոխի</i> բառերը և <i>կիրառի</i> խոսքում:</li> <li>4. <i>Իմանալ</i> անկանոնությունները բառերի ձևափոխությունների ժամանակ և <i>կիրառի</i> խոսքում:</li> <li>5. <i>Կազմի</i> տարբեր ծավալի և բովանդակության տեքստեր նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերով:</li> <li>6. <i>Կազմի</i> տարբեր ծավալի և բովանդակության տեքստեր քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերով:</li> <li>7. <i>Կազմի</i> տարբեր ծավալի և բովանդակության տեքստեր վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերով:</li> </ol>	
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ գոյական, ածական, թվական, բայ, մակբայ</li> <li>• Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ կապ, շաղկապ</li> <li>• Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասեր՝ վերաբերական, ձայնարկություն</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>

<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Գտնել և դասակարգել</i> տրված տեքստում նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը, <i>գտնել</i> բայերի խոնարհման անկանոնության դեպքերը:</li> <li>2. <i>Չարտացոլել</i> տեքստը վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերով՝ վերաբերականներով և ձայնարկություններով:</li> <li>3. <i>Վերաշարադրել</i> ակնարկը՝ փոփոխելով կիրառված բայերի ժամանակաձևերը:</li> <li>4. <i>Գրել</i> պատմական ակնարկ՝ քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերով:</li> <li>5. <i>Շարադրել</i> տեղեկատվական նյութ՝ կիրառելով վերաբերականներ:</li> <li>6. <i>Կազմել</i> վարչական տեքստեր՝ տեղեկանք, դիմում, լիազորագիր և այլն՝ կիրառելով կապեր, շաղկապներ:</li> <li>7. <i>Ստեղծել</i> գովազդ՝ կիրառելով ձայնարկություններ:</li> <li>8. <i>Կազմել</i> ոչ ծավալուն գեկուցում՝ կիրառելով շաղկապներ:</li> <li>9. <i>Ստեղծել</i> երկխոսություն՝ լայնորեն կիրառելով վերաբերականներ և ձայնարկություններ, այն <i>ներկայացնել</i> լսարանին:</li> <li>10. <i>Շարադրել</i> ակնարկ, նովել, պատմվածք տրված նյութական խոսքի մասերով:</li> <li>11. <i>Կատարել</i> փոքր տեքստերի թարգմանություն՝ հարուստ վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերով:</li> <li>12. <i>Գրել</i> փոքրիկ բանաստեղծություն՝ հագեցած ձայնարկություններով:</li> <li>13. <i>Նկարագրել</i> արվեստի սիրելի գործը՝ կիրառելով ածականներ, դերբայներ, մակբայներ:</li> <li>14. <i>Ստեղծել</i> պատմական դեպքերով և ժամանակագրությամբ հարուստ տեքստ՝ կիրառելով նյութական խոսքի մասեր, մասնավերապես՝ թվականներ:</li> <li>15. <i>Կազմել</i> ծավալուն խոսք՝ ընդգծելով նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը:</li> <li>16. <i>Ստեղծել</i> գրական տեքստ՝ լայնորեն կիրառելով առարկայի և գործողության հատկանիշ ցույց տվող խոսքի մասեր (օր.՝ ածականներ և մակբայներ):</li> </ol>	<p><b>Օրինաչափություն:</b> Խոսքի մասերի դասակարգումը ձևիմաստային որոշակի օրինաչափությունների հիման վրա:</p> <p><b>Կառուցվածք և գործառույթ</b> Տարբեր խոսքի մասերի կառուցվածքային առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված գործառույթները խոսքում:</p> <p><b>Ժամանակ և տարածություն:</b> Ժամանակի, տեղի դրսևորումները տարբեր խոսքի մասերի հարացույցում, ժամանակի և տարածության ներգործությունը խոսքի ձևավորման վրա:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	
<p><b>Գրականություն:</b> Գրական տեքստերում տարբեր խոսքի մասերի կիրառության հաճախականությունը: Գրական չափածո երկերում ածականների և մակբայների լայն կիրառում:</p> <p><b>Չասարակագիտություն: Իրավագիտություն:</b> Վարչական տեքստերում քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի կիրառում:</p> <p><b>Արվեստ:</b> Ածականների, դերբայների, մակբայների դերը արվեստի գործերը նկարագրելիս:</p> <p><b>Օտար լեզուներ.</b> Թարգմանությունների ժամանակ խոսքի մասերի և դրանց կրած փոփոխությունների կարևորում: Տարբեր լեզուների խոսքիմասային առանձնահատկությունները. նմանություններ և տարբերություններ:</p> <p><b>Պատմություն:</b> Պատմական իրադարձությունների նկարագրություններում լայնորեն կիրառվող խոսքի մասերի անհրաժեշտությունը:</p>	
<p><b>Կապը Չանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադրյունների հետ</b></p>	
<p>II -9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>	

<p align="center"><b>Թեմա</b></p>
<p align="center"><b>ՇԱՐԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ (18 դ/ժամ)</b></p>
<p><b>ՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b></p>
<p><i>Իմանալ</i> բառերի կապակցման միջոցներն ու եղանակները շարահյուսական կառույցում: <i>Չասկանալ</i> նախադասության ՝ որպես խոսքի նվազագույն միավորի կարևորությունը խոսքում: <i>Ըմբռնել</i> շարահյուսական հոմանիշների դերը խոսքում:</p>
<p><b>ՎԵՐՋՆԱՐՅՈՒՆՔՆԵՐ</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կիրառի</i> խոսքում քերականական հոմանիշներ:</li> <li>2. Տեքստում <i>փոփոխի</i> լեզվական որևէ միավոր համապատասխան հոմանիշով:</li> <li>3. Տրված բառակապակցությունն <i>արտահայտի</i> մեկ բարդ բառով:</li> <li>4. Տրված բառն <i>արտահայտի</i> դարձվածքով և <i>կիրառի</i> խոսքում:</li> <li>5. Բարդ նախադասությունը <i>վերածի</i> դերբայական դարձվածով պարզ նախադասության:</li> <li>6. Ներգործական նախադասությունը <i>դարձնի</i> կրավորական և հակառակը:</li> <li>7. Ուղղակի խոսքը <i>վերածի</i> անուղղակի խոսքի և հակառակը:</li> <li>8. <i>Ստեղծի</i> ծավալուն խոսք մեջբերվող խոսքով:</li> <li>9. <i>Ստեղծի</i> ծավալուն խոսք դերբայական դարձվածներով՝ փոխակերպելով բարդ նախադասությունների:</li> <li>10. <i>Կետադրի</i> դերբայական դարձվածներով հարուստ տեքստը:</li> <li>11. <i>Կետադրի</i> ուղղակի խոսքով հարուստ տեքստը:</li> </ol>
<p><b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b></p>
<ul style="list-style-type: none"> <li>• Շարահյուսական հոմանիշներ</li> <li>• Բարդ բառ և բառակապակցություն/դարձվածք</li> <li>• Յուրովաձև և կապական կառույց</li> <li>• Դերբայական դարձված և բարդ ստորադասական նախադասություն. փոխակերպում</li> <li>• Դերբայական դարձվածի կետադրությունը</li> <li>• Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք. փոխակերպում</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>• Ուղղակի խոսքի կետադրությունը</li> <li>• Ներգործական և կրավորական կառույցներ. փոխակերպում</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Տրված</i> նախադասությունների կապական կառույցները <i>փոխարինել</i> հոլովածներով:</li> <li>2. <i>Կազմել</i> վարչական տեքստ դերբայական դարձվածներով, դրանք <i>փոխարինել</i> երկրորդական (ստորադաս) նախադասությամբ::</li> <li>3. <i>Ստեղծել</i> պատմական տեքստ բարդ ստորադասական նախադասություններով:</li> <li>4. <i>Կազմել</i> գործնական գրություններ կրավորական նախադասություններով:</li> <li>5. <i>Ստեղծել</i> տեղեկատվական նյութ՝ ռեպորտաժ՝ կիրառելով դերբայական դարձվածներ:</li> <li>6. <i>Ստեղծել</i> զովագո՛ղ՝ գուգահեռաբար գործածելով բառեր և դրանց փոխարինող դարձվածքներ:</li> <li>7. <i>Ճարտդրել և վերարտադրել</i> փոքրիկ պատմվածք՝ հագեցած երկխոսություններով:</li> <li>8. Տեքստի ուղղակի խոսքերը <i>դարձնել</i> անուղղակի:</li> <li>9. <i>Վերապատմել</i> սիրելի կինոնկարը՝ կիրառելով անուղղակի խոսք:</li> <li>10. Գրական որևէ երկից <i>ընտրել և ներկայացնել</i> երկխոսություններ:</li> <li>11. Կազմակերպել էքսկուրսիա որևէ պատմական վայր, հանդես գալ որպես էքսկուրսավար՝ խոսքում կիրառելով անուղղակի և ուղղակի խոսք:</li> <li>12. <i>Կազմել</i> քրեական գործ՝ հագեցած դերբայական դարձվածներով. այդ նախադասությունները <i>փոխարինել</i> բարդ նախադասություններով:</li> <li>13. <i>Կատարել</i> փոքր տեքստերի թարգմանություն՝ կիրառելով մեջբերվող խոսք:</li> <li>14. <i>Կետադրել</i> դերբայական դարձվածով հարուստ տեքստը, <i>բացատրել</i> կետադրությունը:</li> <li>15. <i>Կազմել</i> երկխոսություն՝ վերջերս տեղի ունեցած մշակութային կարևոր միջոցառման վերաբերյալ, <i>կետադրել, ներկայացնել</i>:</li> <li>16. <i>Կազմել</i> ծավալուն խոսք՝ բարդ բառերը փոխարինելով կայուն բառակապակցություններով:</li> <li>17. <i>Ստեղծել</i> գրական տեքստ՝ լայնորեն կիրառելով դարձվածքներ, ըստ անհրաժեշտության դրանք <i>փոխարինել</i> բառերով:</li> </ol>	<p><b>Կայունություն և փոփոխություն:</b>  Խոսքում անհրաժեշտ կայուն կառուցվածքի ձևավորում մեջբերվող խոսքի, դերբայական դարձվածի միջոցով և դրանց հնարավոր բովանդակային փոփոխություններ:</p> <p><b>Ժամանակ և տարածություն:</b>  Ժամանակի և տարածության ներգործությունը խոսքի ձևավորման վրա:</p> <p><b>Պատճառ և հետևանք:</b>  Նախադասությունների միջև եղած պատճառահետևանքային իմաստակիր կապերի առկայությունը:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Չասարակագիտություն: Իրավագիտություն:</b> Վարչական տեքստերում, գործնական գրություններում դերբայական դարձվածների և կրավորական կառույցների կիրառում:</p> <p><b>Պատմություն:</b> Պատմական տեքստերում բարդ նախադասությունների կիրառում:</p> <p><b>Օտար լեզուներ.</b> Թարգմանությունների ժամանակ մեջբերվող խոսքի, կրավորական կառույցների և դերբայական դարձվածով պարզ նախադասությունների թարգմանում:</p> <p><b>Գրականություն:</b> Գրական գործերում բառերի ու դարձվածքների, մեջբերվող խոսքի կիրառում:</p> <p><b>Արվեստ:</b> Բեմական խոսքում ուղղակի խոսքի կիրառության հաճախականություն:</p>	
<b>Կապը Չանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42	

<b>Թեմա</b>
<b>ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ</b> (10 դ/ժամ)
<b>ԻՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>
<p><i>Ընկալել</i> տեքստը՝ որպես մեկ ամբողջություն:</p> <p><i>Կազմել</i> տարբեր ոճերի տեքստեր:</p> <p><i>Կարևորել</i> տեքստերի կազմությունը խոսքում:</p>
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կազմի</i> ծավալուն և ոչ ծավալուն տեքստեր:</li> <li>2. <i>Կազմի</i> տեքստ ըստ նախօրոք տրված պլանի:</li> <li>3. <i>Ներկայացնի</i> տեքստը որպես մեկ ամբողջություն:</li> <li>4. <i>Փոխանցի</i> տեքստի պահանջվող իմաստը/միտքը՝ ըստ տեքստի մասերի ճիշտ և հաջորդական կիրառության:</li> <li>5. <i>Կիրառի</i> բառապաշարի համապատասխան շերտերը տարբեր ոճերի տեքստերում:</li> <li>6. Տեքստի միջոցով <i>փոխանցի</i> ասելիքի նպատակը, խնդիրները:</li> <li>7. <i>Թարգմանի</i> տեքստեր՝ պահպանելով ասելիքի նպատակը, խնդիրները, բառապաշարը, ոճական նկարագիրը:</li> <li>8. <i>Ընտրի</i> տեքստին համապատասխան վերնագիր, բնաբան:</li> <li>9. Տեքստը <i>բաժանի</i> պարբերությունների:</li> <li>10. Ըստ անհրաժեշտության <i>կազմի</i> ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ:</li> </ol>
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>

<ul style="list-style-type: none"> <li>• Տեքստը՝ որպես լեզվական միավոր</li> <li>• Տեքստի մասերը՝ սկզբնամաս, հիմնամաս, ավարտամաս (առաջաբան, հիմնական մաս, վերջաբան)</li> <li>• Պարբերությունը՝ որպես տեքստի նվազագույն միավոր</li> <li>• Տեքստի վերնագիր, ծանոթություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Շարունակել</i> պատմությունը՝ վերնագրելով այն:</li> <li>2. <i>Վերադասավորել</i> տեքստը՝ ըստ տրված պարբերությունների:</li> <li>3. Իմաստային կապերի հիման վրա <i>առանձնացնել</i> տրված տեքստի պարբերությունները:</li> <li>4. <i>Կազմել</i> շարադրանք նախօրոք տրված վերնագրով կամ թեմայով:</li> <li>5. <i>Ստեղծել</i> գրական տեքստ տրված բառերով և արտահայտություններով:</li> <li>6. <i>Գրել</i> վերլուծական շարադրություն հանձնարարված գրական տեքստի վերաբերյալ:</li> <li>7. <i>Գրել</i> նկարագրական-բնութագրական շարադրանք հասարակական որևէ գործի մասին:</li> <li>8. <i>Կազմել</i> տեղեկատվական տեքստ՝ կիրառելով տրված բառերն ու արտահայտությունները:</li> <li>9. <i>Գրել</i> էսսե տրված պլանի համաձայն:</li> <li>10. <i>Գրել</i> ազատ էսսե երիտասարդությանը հուզող հարցերի շուրջ:</li> <li>11. <i>Ընտրել</i> դարձվածքով, թևավոր խոսքով, շրջասույթով ձևավորված վերնագրեր տրված տեքստի համար:</li> <li>12. <i>Ստեղծել</i> գովազդային տեքստ՝ գուգահեռաբար կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:</li> <li>13. <i>Գրել</i> ժողովրդին ուղղված կոչ, ուղերձ երևակայական աղետից հետո կամ ընթացքում:</li> <li>14. <i>Գրել</i> ոչ գրական տեքստ բնապահպանական կամ սոցիալական թեմայով:</li> <li>15. <i>Կազմել</i> ռեպորտաժ որևէ իրադարձության վերաբերյալ:</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Տարբեր տեքստերում առկա կառուցվածքային առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված տեսակները:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն:</b> Տեքստերի և դրանց տեսակների կառուցվածքային համեմատական կայունությունը և փոփոխությունների ենթարկվելու կարողությունը ժամանակի մեջ:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում:</b> Տեքստերի միջոցով գաղափարներ, համոզմունքներ բացահայտելու ուղիները. մշակութային արժեքներ փոխանցելու հնարավորությունները:</p>
<b>Միջառարկայական կապեր</b>	
<p><b>Գրականություն:</b> Գրական տեքստերի ստեղծման առանձնահատկությունների կարևորում, կառուցվածքային ամբողջականության ապահովում, վերնագրի ընտրություն:</p> <p><b>Բնագիտամաթեմատիկական և տեխնիկական առարկաներ:</b> Մասնագիտական տեքստերի և դրանցով կիրառված բառապաշարի ըմբռնում և վերարտադրում: Ոչ գրական տեքստերի ստեղծում, դրանց համապատասխան կառուցվածքի, հաջորդականության պահպանում և կարևորում:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Օտարալեզու տեքստերի թարգմանում համապատասխան բառապաշարի և քերականական կառույցների կիրառությամբ: Տեքստերի կառուցման օրինաչափությունների բացահայտում տարբեր լեզուներով ստեղծված տեքստերում:</p> <p><b>Արվեստ:</b> Համապատասխան տեքստերի միջոցով արվեստի գործի բառային նկարագրում, հույզերի փոխանցում:</p>	
<b>Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ</b>	
II -9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42	

<b>Թեմա</b>	
<b>ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՅԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b> (4 դ/ժամ)	
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b>	
<p><i>Հասկանալ</i> պատկերավորման և արտահայտչական միջոցների կարևորությունը խոսքի գեղագիտության մեջ:</p> <p><i>Կազմել</i> արտահայտիչ և պատկերավոր խոսք:</p>	
<b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կազմել</i> պատկերավորման միջոցներով հարուստ գրական տեքստ:</li> <li>2. <i>Կազմել</i> արտահայտչական միջոցներով հարուստ գրական տեքստ:</li> <li>3. <i>Հարստացնել</i> տեքստը պատկերավորման միջոցներով:</li> <li>4. <i>Հարստացնել</i> տեքստը արտահայտչական միջոցներով:</li> <li>5. <i>Վերլուծել</i> տեքստը՝ վեր հանելով պատկերավորման և արտահայտչական միջոցները:</li> <li>6. <i>Տարբերել</i> բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, <i>կիրառել</i> խոսքում:</li> </ol>	
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• Պատկերավորման միջոցներ (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, խորհրդանիշ և այլն)</li> <li>• Արտահայտչական միջոցներ (կրկնություն, աստիճանավորում, հակադրություն և այլն )</li> </ul>	
<b>Առաջարկվող գործունեության ձևեր</b>	<b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b>



<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված տեքստը <i>հարստացնել</i> կամ <i>փոխարինել</i> տարբեր մակդիրներով:</li> <li>2. Տրված տեքստը <i>հարստացնել</i> համեմատություններով և փոխաբերություններով:</li> <li>3. <i>Գրել</i> մակդիրներով հարուստ փոքրիկ բանաստեղծություն:</li> <li>4. Տրված տեքստում <i>առանձնացնել</i> պատկերավորման միջոցները, նույն տեքստը <i>հարստացնել</i> պատկերավորման միջոցներով:</li> <li>5. Տրված տեքստում <i>առանձնացնել</i> արտահայտչական միջոցները, <i>հարստացնել</i> տեքստը այլ արտահայտչական միջոցներով:</li> <li>6. <i>Գրել</i> գրական ոչ ծավալուն տեքստ (պատմվածք, ակնարկ, նովել)՝ կիրառելով պատկերավորման և արտահայտչական միջոցներ:</li> <li>7. <i>Գրել</i> ելույթ՝ կիրառելով պատկերավորման և արտահայտչական տարբեր միջոցներ, <i>ներկայացնել</i> այն:</li> <li>8. <i>Նկարագրել</i> արվեստի սիրելի գործը՝ օգտագործելով պատկերավորման և արտահայտչական միջոցներ:</li> <li>9. Պատկերասրահում <i>հանդես գալ</i> որպես էքսկուրսավար և պատկերավորման միջոցների լայն կիրառությամբ <i>ներկայացնել</i> հայտնի նկարիչների կտավներ:</li> <li>10. <i>Թարգմանել</i> տրված տեքստը՝ փորձելով պահպանել և փոխանցել պատկերավորման և արտահայտչական միջոցները. խոսքի գեղագիտությունը:</li> <li>11. <i>Ստեղծել</i> փոքրիկ բեմադրություն՝ հարուստ պատկերավորման և արտահայտչական միջոցներով:</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b>          Գրական և ոչ գրական տեքստերի բովանդակության փոխանցումը՝ պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառության հաճախականությամբ պայմանավորված:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում:</b>          Պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառությամբ գաղափարներ, համոզմունքներ բացահայտելու ուղիները. մշակութային արժեքներ ստեղծելու հնարավորությունները:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	
<p><b>Գրականություն:</b> Գեղարվեստական խոսքում պատկերավորման և արտահայտչական միջոցների լայն կիրառում:</p> <p><b>Բնագիտամաթեմատիկական առարկաներ:</b> Ոչ գրական տեքստերում արտահայտչական միջոցների՝ օրինակ՝ հռետորական դարձույթների կիրառում:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Պատկերավորության և արտահայտչական միջոցներով հարուստ օտարալեզու գրական տեքստերի թարգմանության առանձնահատկությունների ընդգծում, կիրառում:</p> <p><b>Արվեստ:</b> Բեմական խոսքում պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառում: Բեմական խոսքի ազդեցիկության մեծացումը պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառության դեպքում:</p>	
<p><b>Կապը Հանրակրթության չափորոշիչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ</b></p>	
<p>II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>	

**12-րդ դասարան**

Շաբաթական 2 դասաժամ, տարեկան 34 դասաժամ

<p><b>Թեմա</b></p>	
<p><b>ՈՃԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (10 դ/ժամ)</b></p>	
<p><b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b></p>	
<p><i>Ընկալել և փոխանցել</i> խոսքի բովանդակությունը:  <i>Հասկանալ</i> լեզվի համապատասխան միջոցների կարևորությունը խոսք կառուցելիս:  <i>Կազմել</i> արտահայտիչ և պատկերավոր խոսք:</p>	
<p><b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b></p>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կազմել</i> տեքստ՝ կիրառելով ոճի հատկությունները:</li> <li>2. <i>Կազմել</i> գրական տեքստ՝ ընտրելով ոճի համապատասխան հատկություններ (բովանդակայնություն, հուզականություն, պատկերավորություն)</li> <li>3. <i>Կազմել</i> ոչ գրական տեքստ՝ ընտրելով ոճի համապատասխան հատկություններ (կանոնավորություն, ճշգրտություն, սեղմություն, պարզություն)</li> <li>4. <i>Փոխանցել</i> տեքստի միտքը՝ կիրառելով տեքստի ոճին համապատասխան հատկություններ:</li> <li>5. <i>Կիրառել</i> բառապաշարի համապատասխան շերտերը ոճերի հատկությունները փոխանցելու համար:</li> <li>6. Տեքստը <i>ենթարկել</i> փոփոխությունների (սեղմել, ընդարձակել, պարզեցնել, հարստացնել բառերով և արտահայտություններով):</li> <li>7. <i>Թարգմանել</i> տեքստեր՝ պահպանելով ոճական առանձնահատկությունները:</li> </ol>	
<p><b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li>• Գաղափար ոճի հատկությունների մասին</li> <li>• Ոճի հատկությունների տեսակները</li> </ul>	
<p><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p><b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Առանձնացնել</i> տեքստում առկա ոճական հատկությունները:</li> <li>2. Տրված տեքստը <i>ենթարկել</i> փոփոխությունների. սեղմել կամ ընդարձակել:</li> <li>3. <i>Կազմել</i> տեղեկատվական տեքստ՝ կիրառելով ոճական համապատասխան հատկություններ՝ պարզություն, ճշգրտություն:</li> <li>4. <i>Ստեղծել</i> գիտական ոչ ծավալուն տեքստ՝ կիրառելով ոճական համապատասխան</li> </ol>	<p><b>Պատճառ և հետևանք</b>          խոսքում անհրաժեշտ պատճառահետևանքային կապերի ստեղծումը:</p>

<p>հատկություններ՝ ճշգրտություն, բովանդակայնություն, կանոնավորություն:</p> <p>5. <i>Գրել</i> ելույթ՝ կիրառելով ոճական համապատասխան հատկություններ՝ բազմազանություն, պատկերավորություն, հուզականություն:</p> <p>6. <i>Գրել</i> գրական ոչ ծավալուն տեքստ (պատմվածք, ակնարկ, նովել)՝ կիրառելով ոճական համապատասխան հատկություններ՝ հուզականություն, պատկերավորություն:</p> <p>7. <i>Ստեղծել</i> բեմագիր (սցենարի) ըստ կյանքից վերցված փաստի կամ գրական երկի՝ կիրառելով ոճական համապատասխան հատկություններ՝ արտահայտչականություն, հուզականություն և այլն:</p>	<p><b>Անհատ և հարաբերություններ:</b> Տարբեր իրավիճակներ, մարդկային և հասարակական հարաբերություններ ներկայացնելիս ոճերի հատկությունների միջոցով յուրատեսակ վերաբերմունքի դրսևորում:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում:</b> Խոսքի ոճական առանձնահատկությունները գաղափարներ, համոզմունքներ փոխանցելիս, եզրահանգումներ կատարելիս:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	
<p><b>Գրականություն:</b> Գրական տեքստերում ոճերի հատկությունների առկայության անհրաժեշտություն, դրանց կիրառման կարևորում:</p> <p><b>Բնագիտամաթեմատիկական առարկաներ:</b> Ոչ գրական տեքստերում ոճական համապատասխան հատկությունների կիրառում:</p> <p>Մասնագիտական տեքստերի ստեղծում համապատասխան ոճական հատկությունների կիրառությամբ:</p> <p><b>Օտար լեզուներ:</b> Օտարալեզու տեքստերի թարգմանում և ոճերի հատկությունների արտացոլում թարգմանության միջոցով:</p> <p><b>Արվեստ:</b> Խոսքի ոճական հատկությունների կիրառմամբ արվեստի գործերի բառային նկարագրում. գեղագիտական մոտեցման դրսևորում:</p>	
<p><b>Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադյունքների հետ</b></p>	
<p>II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>	

<p align="center"><b>Թեմա</b></p>	
<p align="center"><b>ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԴՐԱՆՔ</b> (10 դ/ժամ)</p>	
<p><b>ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ</b></p>	
<p><i>Իմանալ</i> գիտական շարադրանքի սկզբունքները: <i>Կազմել</i> գիտական տեքստեր: <i>Կարևորել</i> գիտական տեքստերի առկայությունը գիտության զարգացման գործում:</p>	
<p><b>ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b></p>	
<ol style="list-style-type: none"> <li>1. <i>Կազմի</i> ծավալուն և ոչ ծավալուն գիտական տեքստեր:</li> <li>2. <i>Կազմի</i> գիտական տեքստ ըստ նախօրոք տրված պլանի:</li> <li>3. <i>Ներկայացնի</i> տեքստը որպես մեկ ամբողջություն:</li> <li>4. <i>Փոխանցի</i> գիտական տեքստի բովանդակությունը՝ ըստ տեքստի մասերի ճիշտ և հաջորդական կիրառության:</li> <li>5. <i>Կիրառի</i> բառապաշարի համապատասխան շերտերը գիտության տարբեր բնագավառներին առնչվող տեքստեր կազմելիս:</li> <li>6. <i>Կիրառի</i> համապատասխան աղբյուրներ գիտական տեքստեր կազմելիս:</li> <li>6. <i>Թարգմանի</i> ոչ ծավալուն գիտական տեքստեր՝ պահպանելով ասելիքի նպատակը, խնդիրները, բառապաշարը, ոճական նկարագիրը:</li> <li>7. <i>Կազմի</i> ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ:</li> </ol>	
<p><b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li>• Գիտական շարադրանք</li> <li>• Գիտական շարադրանք գրելու սկզբունքները</li> <li>• Գիտական շարադրանքի լեզուն</li> <li>• Գիտական տեքստի վերնագիրը, ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ</li> </ul>	
<p align="center"><b>Առաջարկվող գործունեության ձևեր</b></p>	<p align="center"><b>Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ</b></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Տրված գիտական տեքստում <i>առանձնացնել</i> ներածությունը, հիմնական մասը և վերջաբանը/եզրակացությունը:</li> <li>2. Պարբերություններն այնպես <i>դասավորել</i>, որ ստացվի տրամաբանական հաջորդականություն ունեցող տեքստ:</li> <li>3. <i>Համեմատել</i> գիտական և գեղարվեստական փոքրածավալ տեքստերը, <i>նշել</i> տարբերությունները:</li> <li>4. Համացանցից <i>գտնել</i> գիտահանրամատչելի հետաքրքիր տեքստ և նշել տարբերությունները բուն գիտական տեքստից:</li> <li>5. <i>Կազմել</i> գիտական տեքստ նախօրոք տրված քայլաշարով:</li> <li>6. <i>Առաջ քաշել</i> դրույթ, հիմնավորել փաստարկներով, մատնանշել աղբյուրները:</li> <li>7. <i>Յենկելով</i> առաջադրված աղբյուրների վրա՝ գրել գիտական շարադրանք համապատասխան հետազոտական հարցի շուրջ:</li> <li>8. Նախօրոք ձեռք բերած փաստական նյութի, եղած կարծիքների ուսումնասիրության</li> </ol>	<p><b>Կառուցվածք և գործառույթ:</b> Գիտական տեքստեր կազմելիս կառուցվածքային առանձնահատկությունների խոր ըմբռնումն ու կիրառությունը:</p> <p><b>Կայունություն և փոփոխություն</b> Արդի աշխարհում գիտական տեքստերի կառուցվածային և իմաստային կայուն կապերը և գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված փոփոխությունների</p>

<p>հիման վրա <i>ստեղծել</i> գիտական շարադրանք հրատապ լուծում պահանջող խնդրի շուրջ:</p> <p>9. <i>Գրել</i> գիտական շարադրանք՝ պահպանելով տեքստի կառուցվածքը՝ ներածություն, հիմնական մաս և վերջաբան/եզրակացություն:</p> <p>10. <i>Ստեղծել</i> գիտական ոչ ծավալուն տեքստ բնագիտական որևէ թեմայով:</p> <p>11. <i>Գրել</i> գիտական փոքրածավալ տեքստ տեխնոլոգիական որևէ նորարարության մասին:</p> <p>12. <i>Գրել</i> փոքրածավալ գիտական շարադրանք տրված տերմիններով:</p> <p>13. <i>Նախօրոք</i> գրված գիտական փոքրիկ աշխատանքի վերաբերյալ պատրաստել և ներկայացնել բանավոր գեկուցում:</p> <p>14. <i>Կազմակերպել</i> բանավեճ որևէ հիմնախնդրի շուրջ՝ կիրառելով համապատասխան տերմիններ:</p> <p>15. <i>Կազմել</i> գիտական շարադրանքին անհրաժեշտ հավելվածներ, ցանկեր, ծանոթագրություններ:</p>	<p>անհրաժեշտությունը:</p> <p><b>Անհատական և մշակութային արտահայտում:</b>          Գիտական տեքստերի միջոցով գաղափարներ, համոզմունքներ բացահայտելու ուղիները. մարդկության ստեղծած նյութական և հոգևոր արժեքների փոխանցումը:</p> <p><b>Պատճառ և հետևանք</b>          Խոսքում անհրաժեշտ պատճառահետևանքային կապերի ստեղծումը:</p>
<p><b>Միջառարկայական կապեր</b></p>	
<p><b>Գրականություն:</b> Գրականագիտական տեքստերի կազմում, վերլուծական մտքի կարևորումը տեքստում:  <b>Գիտության բոլոր բնագավառներ:</b> Գիտական տեքստերի կարևորությունը գիտական աշխարհում: Գիտության զարգացման առաջընթացի համատեքստում գիտական տեքստերի ստեղծում, գիտական տեքստերի միջոցով գիտատեխնիկական նորությունների փոխանցման ապահովում:  <b>Օտար լեզուներ:</b> Օտարալեզու գիտական տեքստերի կարևորում, գիտատեխնիկական առաջընթացը ապահովելու գործում դրանց թարգմանում:</p>	
<p><b>Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ</b></p>	
<p>II-9-Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ40, Մ41, Մ42</p>	

**ԳՆԱՅԱՏՈՒՄ**

Հայոց լեզվի և գրականության ուսումնառության գործընթացում կիրառվում են գնահատման հետևյալ տեսակները.

1. Ախտորոշիչ
2. Ձևավորող կամ ուսուցանող
3. Միավորային

**Ախտորոշիչ** գնահատում կիրառվում է, երբ սովորողը մի դասարանից կամ դպրոցի աստիճանից անցնում է մյուսին կամ երբ տեղափոխվում է այլ դպրոց, որտեղ հարկ է լինում հայոց լեզվից և գրականությունից ձեռքբերումների կամ բացթողումների իրական պատկերը տեսնել՝ սովորողի հետագա ուսումնառությունը կազմակերպելու համար:

**Ձևավորող (ուսուցանող)** գնահատումն իրականացվում է սովորածը առավել ամրապնդելու, ուսուցանված թեմայի բացթողումները գրանցելու, դրանք շտկելու նպատակով: Ձևավորող գնահատումը միավորային չէ. բնութագրական է, խոսքային է: Ձևավորող գնահատումը կիրառվում է թեմայի ուսումնասիրության ընթացքում և միավորային գնահատումից առաջ:

**Միավորային** գնահատումն իրականացվում է տարիքային ամեն խմբի համար սահմանված նպատակների, վերջնարդյունքների համաձայն, անպայման սանդղակներով: Միավորային գնահատում իրականացվում է կիսամյակի ընթացքում 3-4 անգամ՝ ամեն թեմայի ավարտից հետո: Միավորային գնահատման առաջադրանքի տեսակը, դրա գնահատման սանդղակը ուսուցիչը նախօրոք տրամադրում է աշակերտներին:

**Ներքին և արտաքին** գնահատում. ներքին գնահատում իրականացնում է դպրոցը, իսկ արտաքին գնահատումն իրականացնում է պետական լիազոր մարմինը:

**Ներքին գնահատման** համար կազմվում են առաջադրանքներ, որոնք ստուգում են սովորողի՝ տեքստը կարդալու և հասկանալու, վերլուծելու, ցանկացած թեմայով հանպատրաստից բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունները, այսինքն՝ հայոց լեզվի և գրականության վերջնարդյունքներով նախանշվող գործունեության բոլոր ձևերը:

**Արտաքին գնահատում.** իրականացվում է 9-րդ և 12-րդ դասարանների ավարտին: 9-րդ դասարանի ավարտին առաջարկվում է որպես ստուգման ձև ընտրել ստեղծագործական փոխադրությունը կամ հանպատրաստից շարադրանքը որևէ թեմայով՝ որպես խոսք կազմելու կարողության ստուգում:

12-րդ դասարանն ավարտած սովորողների ձեռքբերումները հայոց լեզվից և գրականությունից կարելի է կազմակերպել ըստ մասնագիտական ուղղվածության:

- 1) խորացված հումանիտար ուղղվածության առարկաներ ընտրած աշակերտները գրում են հետազոտական-վերլուծական շարադրանք, որը 2 տարվա հետազոտական աշխատանքի արդյունք է, և որը գնահատելու է պետական լիազոր մարմինը.
- 2) բնագիտամաթեմատիկական առարկաներ ընտրած աշակերտները գրավոր հանպատրաստից շարադրանք են գրում, որը դարձյալ գնահատվելու է պետական լիազոր մարմին կողմից:

**Գնահատման գործընթացում շեշտադրվում է ակադեմիական ազնվության պահպանումը:**